Universitäts- und Landesbibliothek Bonn

# Zanazan araroġowt□iwnk□ Yerowsaġêm i S. Yakovb

i Hayrapetowt□ean Amenayn Hayoc□ T. T. Gêorgay Vehap□a□ Kat□owġikosi hramanaw Patriark□i Srboy Erowsaġemi Amenapativ T. Esayeay Srbazan Ark□episkoposi ew i Patriark□owt□ean Kostandnowpôlsoy Amenapatiw T. Mkrtč□i Srbazan Ark□episkoposi

**Yerowsaġêm, 1870**

**urn:nbn:de:hbz:5:1-10810**

Visual Library

Goussan 2908

Jacob.

# ԶԱՆԱԶԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՔ

## ՅԵՐՈՒՍԱՂԷՄ Ի Ս. ՅԱԿՈՎԲ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ**

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ՀՐԱՄԱՆԱՒ

ՊԱՏՐԻԱՐՔԻ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ԵՍԱՅԵԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՄԿՐՏՉԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՌՅԺԹ

Ի ՏՊԱՐԱՆԻ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

-1870-

2908



# ԿԱՆՈՆ

## ԸՆԾԱՅՄԱՆ ՏՂԱՅՈՑ

Օրհնի ժամերգութեան, տայ աւագ լուսարարն շուրջառ՝ խաչ և գաւազան Սրբազան Պատրիարքին, ապա չորս վարդապետաց շուրջառ. զգեցուցանեն շապիկ և մանկանն, տան լուցեալ մոմով 'ի ձեռն: Սարկաւագն և դպիրքն զգենուն շապիկս, սարկաւագն բուրվառաւ և դպիրքն մոմեղէնօք: Սարկաւագն 'ի ձայն ասէ. Եւ եւս խաղաղութեան: Հայրապետն՝ Օրհնութիւն և փառք Հօր և որդւոյ: Եւ գնան առաջի դրան սուրբ Գլխադրին աւելով շարական Որ Էնն յէութեան. Շուրջառաւոր վարդապետք երկուքն յաջմէ դրան, և երկուքն յահեկէ կացցեն, և մանուկն առաջի դրան 'ի ծունկս ընդգծեալ. Հայրապետն խնկարկէ սուրբ մատրան, և շուրջանակի ամենեցուն. տայ զբուրվառն սարկաւագին և մտանէ 'ի սուրբ Գլխադիրն: Սարկաւագն ասէ.

Եւ եւս խաղաղութեան:

Գոհացարուք զտեառնէ աստուծոյ փրկչէն մերմէ, զի արժանի արար զմեզ մատուցանել 'ի տաճար տն (զմանուկս զայս), եւ խնդրել միջնորդութեամբ սրբոյ և մեծի Առաքելոյն Յակոբայ, զի ընկալցի զսա 'ի խնամս մարդասիրութեան իւրոյ. որպէս երբեմն ընկալաւ Քրիստոս զմանկունս 'ի գիրկս իւր. և զարդարեսցէ զսա շնորհօք Հոգւոյն Սրբոյ 'ի մխիթարութիւն և 'ի սփոփանս ծնողաց սորին. լինել յիշատակ բարի այժմ և յապայն: Ամենակալ տէր աստուած մեր կեցուսցէ և ողորմեսցի:

Ապա Հայրապետն ընթեռնու զԱղօթս ։
Տէր ողորմեա․ տէր ողորմեա․ տէր ողորմեա ։

Փառաւորեալ յամենայնի մարդասէր տէր՝ տուիչ բարութեանց և ընդունող աղօթից, ընկալ և այժմ զմանուկս զայս՝ զոր ուխտիմատուցանեն ծնողք սորա․ լցո զսա ամենայն հոգևոր իմաստութեամբ, որպէս յայնժամ աստուածեղէն բազկաւ քով զմանկտին՝ զորս ընկալար, զօրացո և շնորհօք Հոգւոյդ սրբոյ, որով ըստ հաճոյից կամաց քոց զարգացեալ արժանաւոր լիցի սրբութեամբ և անբծութեամբ հասանել յուսոյ կենացն յաւիտենից ։ և քեզ ընդ Հօր և Հոգւոյդ սրբոյ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից․ ամէն ։

Սաղ․ Ալէլուիա ալէլուիա․ Արդարքն որպէս զարմաւենիս ծաղկեսցին, և որպէս զմայրսն Լիբանանու բազումք եղիցին ։

Ընթերցուած ի յԵսայեայ մարգարէէ ։ Գլ․ ԽԴ․ 1 ։

Բայց արդ՝ լուր Յակոբ ծառայ իմ, և Իսրայէլ զոր ընտրեցիդ ։
Այսպէս ասէ տէր ած քո, որ արար զքեզ և որ ստեղծ զքեզ յորովայնի․ և տակաւին օգնականութիւն գտցես ։ Մի՛ երկնչիր ծառայ իմ Յակոբ՝ և սիրեցեալդ իմ Իսրայէլ՝ զոր ընտրեցի ։ Զի ես տաց ջուր 'ի ծարաւու՝ որոց գնան յանջրդւոջ․ եդից զոգի իմ 'ի վերայ զաւակի քո՝ և զօրհնութիւն իմ 'ի վերայ որդւոց քոց ։ Եւ զուարճասցին իբրև զխոտ ջրարբի․ և իբրև զուռ 'ի մէջ ջուրց գնացից ։ Սինն ասիցէ՝ Աստուծոյ եմ ես, և միւսն խրախոյս բարձցէ յանուն Աստուծոյ Յակոբայ, և միւսն ևս գիր հանցէ ձեռամբ իւրով թէ Աստուծոյ եմ ես, և յանուն Իսրայէլի խրախոյս բարձցէ ։

Ընթերցուած ի յԵսայեայ մարգարէէ ։ Գլ․ Կ․ 4 ։

Համբարձ շուրջ զքև զաչս քո, և տես ժողովեալ առ քեզ զամենայն մանկունս քո․ զի եկին հասին 'ի հեռաստանէ որդիք քո, և դստերք քո 'ի վերայ ուսոց նոցա բարձեալք բերիցին ։ Յայնժամ տեսցես և խնդասցես, երկիցես և զարհուրեսցիս 'ի սրտի քում․ զի փոխեսցի 'ի քեզ մեծու-

թիւն ծովու՝ և ազգաց և
ժողովրդոց։
Եկեսցեն ՚ի քեզ երամակք
ուղտուց, և ծածկեսցեն
զքեզ ուղտերամակքն Մա-
դիամու և Գեփայ։
Ամենեքեան ՚ի Սաբայ ե-
կեսցեն բերել ոսկի և կնդ-
րուկ և ականս պատուա-
կանս. և փրկութեան տեա-
ռըն տացեն զաւետիս։
Եւ ամենայն խաշինք Կեդա-
րու ժողովեսցին առ քեզ,
և խոյք Նաբէովթայ ածցին,
և մատուսցին ընդունելի
պատարագք ՚ի վերայ սեղա-
նոյ իմոյ, և տուն աղօթից
իմոց փառաւորեսցի։
Ո՞վ են սոքա՝ որք իբրև զամ-
պս թռուցեալք են, և
իբրև զաղաւնիս ձագուտա-
ւըն երամովքն զան առ իս։
Ինձ ակն ունին կղզիք և
նաւք Թարշշի յառաջագոյն
ածել զորդիս քո ՚ի հեռաս-
տանէ։
Զարծաթ և զոսկի ընդ ի-
րեանս, վասն անուան տն
սրբոյ, և վասն սրբոյն Իսրա-
յէլի փառաւորելոյ։

Պօղոսի առաքելոյն Եբրայեցւոց թղթոյն է
ընթերցուածս. Գլ. ԺԱ. 11.

Հաւատովք և ինքն Սառա,
որ ամուլն կոչեցեալ էր,
զզօրութիւն առնլոյ զսեր-
մըն որդեծնութեան ըն-
դունէր. և ՚ի տարաժամ
հասակի ծնանէր. քանզի
հաւատարիմ համարեցաւ
զայն՝ որ խոստացաւն։
Վասն որոյ և ՚ի միոջէն ծնա-
նէին. և այն՝ ՚ի յանցեալ
ժամանակի, իբրեւ զաստե-
ղըս երկնից բազմութեամբ,
և իբրեւ զաւազ առ ափն
ծովու առանց թուոյ։
Ըստ հաւատոց մեռան ա-
մենեքին սոքա, և չեւ ևս
ընկալեալ զաւետիսն. այլ
՚ի հեռաստ տեսին զնոսա
և ցնծացան. և խոստովան
եղեն՝ եթէ օտարք՝ և պան-
դուխտք են յերկրի։
Զի որք զայնպիսիսն խօսին,
յայտ առնեն՝ եթէ զգա-
ւառ իմն խնդրեն։
Զի եթէ զայն յիշէին՝ ուս-
տի ելին, գոյր ժամանակ
դառնալոյ անդրէն։
Նա աւանիկ ազնուականի
իմն ցանկացեալք են, այս-
ինքն է՝ երկնաւորին. վասն
որոյ ոչ ամօթ համարի Աստ-
ուած՝ կոչել նոցա Աստուած,
քանզի պատրաստեաց նոցա
զքաղաք։

Հաւատովք մատոյց Աբրա-
համ 'ի փորձութեան իւ-
րում զԻսահակ պատարագ.
և զմիամօրն մատուցանէր,
որոյ զաւետիսն ընկալեալ էր։
Որում ասացաւ, թէ ի Իսա-
հակաւ կոչեսցի քեզ զա-
ւակ։ Եդ 'ի մտի իւրում,
թէ և 'ի մեռելոց կարող է
յարուցանել Աստուած։

Ալէլուիա ալէ"։ Ի բերանոյ մանկանց
տղայոց և ստնդեայց հաստատեցեր
զօրհնութիւն։

Սուրբ աւետարանն Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ
Մարկոսի։

Առ տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ մատուցանէին առ նա
մանկտի, զի ձեռն դիցէ նո-
ցա. իսկ աշակերտքն սաս-
տէին այնոցիկ՝ որք մատու-
ցանէինն։
Իբրև ետես Յիսուս, բար-
կացեալ սաստեաց նոցա և
ասէ. Թոյլ տուք մանկտւոյդ
գալ առ իս, և մի արգելուք
զդոսա. զի այդպիսեացդ է
արքայութիւն Աստուծոյ։
Ամէն ասեմ ձեզ. որ ոչ ըն-
կալցի զարքայութիւն Աս-
տուծոյ իբրև զմանուկ՝ ոչ
մտցէ 'ի նա։
Եւ առեալ զնոսա 'ի գիրկս՝
ձեռն եդ 'ի վերայ՝ և օրհ-
նեաց զնոսա։

Քարոզ.

Վասն գտանելոյ մեզ զշ-
նորհս և զողորմութիւն 'ի
բարերար տեառնէ մերմէ,
զտէր աղաչեսցուք։
Վասն փրկելոյ զմեզ 'ի զըր-
պարտութենէ մարդկան՝ և
յորոգայթից սատանայի,
զտէր աղա։
Վասն ամենայն անձանց քը-
րիստոնէից, և տանց հա-
ւատացելոց, զտէր աղա։
Վասն որք 'ի լերինս յայրս
և 'ի փապարս բնակեալ են
սուրբ հարքն մեր, զտէր ա։
Վասն որք սաղմոսիւք եւ
օրհնութեամբ կատարեն
զամենայն ժամանակս կե-
նաց իւրեանց, զտէր աղա։
Վասն հոգւոյն։ Եւ եւս։
Զանձինս մեր։ Ողորմեա։

Եւ ընթեռնու հայրապետն զաղօթս զայս 'ի վե-
րայ մանկանն։

Տէր ողորմեա. տէր ողորմեա. տէր
ողորմեա։

Տէր Աստուած ամենակալ՝
հզօր և բազմագութ և
պահպանիչ ամենայն եղե-
լութեանց՝ զորս յոչնչէ գո-
յացուցեր. և քոյով բարե-
խնամ գթութեամբ կա-
ռավարին ամենայն արա-
րածք յերկինս և յերկրի.

և 'ի քոյ ամենազօր հրամանաց՝ ունիլ բնաւորեցան համայն տեսակքն աճողական բնութեանց զաճումն և զբազմանալն ։

Տէր ամենակալ՝ դու որ արարեր հայր ազգաց բազմաց զնախնի նահապետսն, և զանբեր և զանպտուղ արգանդսն Սառայի, Աննայի և Եղիսաբեթի օրհնեցեր 'ի բեղմնաւորութիւն, և շնորհեցեր նոցա զզաւակունս օրհնեալս առ 'ի քէն և անուանիս 'ի մէջ ժողովրդեան քո Իսրայէլի ։

Եւ արդ՝ տէր Աստուած մեր բարերար, աղաչեմք ըզքեզ, զի ընկալցիս ողորմութեամբ քով զբանաւոր նուէրս ծառայից քոց՝ իբրև զանդրանիկս ժողովրդեան քո Իսրայէլի. վասն զի ամենայն տուրք բարիք և ամենայն պարգևք կատարեալք 'ի վերուստ առ 'ի քէն շնորհին ազգի մարդկան. և մարդասիրութեամբ քով հաճեցար ընդունիլ 'ի մարդկանէ զպտուղ սիրոյ՝ զնուէրս, 'ի փառս ամենայն անուան քո. քանզի դու ես տէր, ամենառատ բարերար, որ տաս և ընդունիս. վասն որոյ և ծնողք մանկանս այսորիկ, հաւատով յուսով և ջերմեռանդ սիրով ընծայամատոյց լինին ատենիդ արարչիդ զպտուղ որովայնի իւրեանց՝ զքոյնաապարգեւ (Մանուկս զայս). և մեք ամենեքեան միաբան ուխտիւք աղաչեմք զքեզ տէր Աստուած մեր, զի ընկալցիս զսա 'ի գիրկս խնամոց քոց՝ որպէս երբեմն ընկալար զմանկունս, և ձեռն եղեալ օրհնեցեր զնոսա. օրհնեա՛ եւ այժմ զսա ամենակարող աջովդ քով սրբով. որով լցի՛ շնորհօք սուրբ հոգւոյդ, զի դու ես տէր և փրկիչ մեր, և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Մարդասէր Աստուած բարերար, ընկալ զաղաչանս ծառայից քոց, և օրհնեա՛ (զմանուկս զայս, այս անուն) զոր շնորհեցեր միջնորդութեամբ սուրբ առաքելոյն Յակոբայ, որ վասն անուան քո սրբոյ ընկալաւ զբաժակս չարչարանաց

և մահու, 'և պահեա զսա ան-
մերձ յամենայն արկածից
չարին 'ի փառս մեծի ա-
նուան քո սրբոյ, և 'ի սփո-
փանս ծնողաց սորին՝ որք
հաւատով դիմեալ յողոր-
մութիւն քո՝ ընկալան ըզ-
պտուղս զայս ։

Օրհնեա՛ տէր, և զբանաւոր
անդաստանս քո զայսոսիկ՝
պտղաբեր լինել 'ի փառս քո
ըստ ամլացելոյ արգանդին
Աննայի, որ եօթնեակ զա-
ւակօք բարգաւաճեցաւ ։

Ընկա՛լ տէր Աստուած, ըզ-
դուզնաքեայ պարգևս զայս,
'ի ձեռաց սորին՝ փոխանակ
պտղոյ որովայնի իւրեանց,
զոր օրինակ ընկալար զնո-
րաստեղծ խոյն փոխանակ
Իսահակայ. և աստեղաթիւ
զաւակօք արարեր հայր ազ-
գաց բազմաց՝ ըստ հաւա-
տարմութեան Աբրահամու
սիրելւոյ քոյ. և օրհնեցեր
զզաւակն պարգևական ։

Օրհնեա՛ տէր, և (զմանուկս զայս)
նովին օրհնութեամբ կա՛լ
մնա՛լ 'ի կեանս երկարս ան-
փորձ 'ի չարեաց, և 'ի
տղայական պատահարաց.
զօրացո՛ զսա 'ի վարս առա-
քինութեան և յամենայն
գործս բարեաց. Լցո՛ զսա
պարգևօք Հոգւոյդ սրբոյ
զօրանալ զօրութենէ 'ի զօ-
րութիւն, և շնորհաց 'ի շը-
նորհս. և պահեա՛ զսա սուրբ
և անարատ յամենայնի վասն
փառաց անուան քո. որպէս
զի ըստ կամաց քոց բարգա-
ւաճեալ յայսմ աշխարհի
արժանաւոր լիցի յաւիտե-
նական և երկնային կենաց
ընդ սուրբս քոյ. զի դու ես բա-
զումողորմ, և քեզ վայելէ
փառք և իշխանութիւն և
պատիւ, այժմ և միշտ և
յաւիտեանս յաւիտենից.
ամէն ։

Ապա՝ Քարոզ. Սուրբ խաչիւս. Աղօթս՝ Պահպանիչ

# ԿԱՆՈՆ

## ԿԱՂԱՆԴԻ

### ՈՐ Ի 1ն ՅՈՒՆՎԱՐԻ

Եթէ պատահեր աւուրն շաբաթ լիցէ, կատարի տօն սրբոյն Բարսղի կեսարացւոյն, ըստ գրելոյ 'ի տօնացուցին. իսկ եթէ կիւրակէ լիցէ՝ Յարութեան տօն կատարի. միայն օրհնութիւնն. Փառաւոն։ Հարց՝ Նոր կիրակէին ասի. և այլն ամենայն Յարութեան է ըստ կարգի։ Իսկ եթէ Բն. Գն. Դն. Են. և ուր. հանդիպեսցի, յայնժամ կատարի տօն եկեղեցւոյ՝ ըստ այսմ կերպի։ Նշանեն յառեան՝ Տէր ով բազում, ձայնիւ։ Օրդ բուրվառ։ Յիշեսցուք Առաւօտ լուսոյ։ Հանգստեան շարական՝ տէրունի։ ահ. Բէ, Փառաւոն։ Քարոզ՝ ձայնիւ։ Ալէլուիա, եկեղեցւոյ՝ ըստ ձայնին։ Հարց ա՛. Նոր կիւրակէին. Որ խոնարհեցար, ևր սարօքն։ Երգ, Տան քում. Տէր Թագաւորեաց։ Քարոզ՝ Ասասցուք։ Սուրբ աստուած՝ որ խաչեցար։ Մանկունք գյ, Այսօր ցնծան դասք։ Քարոզ՝ Սէ եկեղեցեաւս. Կեցո. Աղօթք՝ Ի մէջ

տաճարիս և առաջի։

Ճաշուն՝ զոյգ կոչնակ։ Ժամամուտ, Օ խաղաղութի շնորհեմ։ Շարական գյ, Այսօր ուրախացեալ։ Գիրք և Աւետարան՝ ըստ պատշաճի։ Սրբասացութիւն, Հրեշտակային։

Երեկոյին՝ քարոզ Ասասցուք։ Համ բարձի ա՛, Որ վերստին նորոգեցեր։ Քարոզ՝ Սուրբ եկեղեցեաւս. Կեցո.

Աղօթք՝ Ի մէջ տաճարիս։

# ԿԱՆՈՆ
## ՃՐԱԳԱԼՈՅՑԻ
### Ի 5ն ՅՈՒՆՎԱՐԻ

Երեկոյին զոյգ կոչնակ։ Զկնի սրբոյ Պատարագին. պատարագիչն զգեստաւորեալ հանդերձ միաբանութեամբ վարդապետօք՝ սարկաւագօք և դպրօք, խնկովք և մոմեղինօք երթան 'ի սեղանն առնել շարական։

Դկ Խորհուրդ մեծ և սքանչելի որ յայսմ աւուր յայտնեցաւ. հովիւքն երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի։

Ծնաւ նոր արքայ 'ի Բեթղեհեմ քաղաքի. որդիք մարդկան օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ։

Անբաւելին երկնի և երկրի 'ի խանձարուրս պատեցաւ. ոչ մեկնելով 'ի հօրէ 'ի սուրբ այրին բազմեցաւ։

Այսօր ցնծան երկինք 'ի վերուստ մեծապայծառ աւետեօք. և արարածք ամենայն զգեցան հանդերձ փրկութեան։

Այսօր յայրին ընծայեցաւ Քրիստոս որդին Աստուծոյ. և հրեղինաց բազմութիւնքն յերկնից յերկիր վայր իջեալ։

Այսօր հովուացն տեսեալ զարդարութեան արեգակն. և ընդ հրեշտակս երգէին փառք 'ի բարձունս Աստուծոյ։

Ի հօրէ ծագեցար լուսաւորել զարարածս, արդարութեան արեգակն տէր փառք քեզ։

Ծնար 'ի յայրին, ընծայեցար Բեթղեհեմ. ար։

Հովուացն յայտնեցար երկրպագեալ 'ի մոգուց. արդարութեան։

Փառք հօր։ Եւ մեք երգեսցուք որ 'ի կուսէն մարմնացար, արդարութեան։

Զկնի Օրթխուզ Աւետարան Ղուկասու. Գ. գլ. 8 հմր.

Եւ հովիւք էին 'ի տեղւոջն յայնմիկ բացօթեայք, որ պահէին զպահպանութիւնս գիշերոյ հօտից իւրեանց։

Եւ հրեշտակ տեառն երեւեցաւ նոցա, և փառք տն ծագեցին առ նոսա, և երկեան երկիւղ մեծ։

Եւ ասէ ցնոսա հրեշտակն. մի երկնչիք, զի ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրա-

ուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանն. զի ծնաւ ձեզ այսօր փրկիչ, որ է օծեալ տէր, 'ի քաղաքի Դաւթի։

Եւ այս նշանակ ձեզ, գըտանիցէք մանուկ պատեալ 'ի խանձարուրս, եւ եդեալ 'ի մսուր։

Եւ յանկարծակի եղեւ ընդ հրեշտակին ընդ այնմիկ բազմութիւն զօրաց երկնաւորաց, որ օրհնէին զԱստուած եւ ասէին, փառք 'ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, 'ի մարդիկ հաճութիւն։

Եւ զփառք 'ի բարձունսն մինչեւ 'ի կէսն ասիցեն. եւ ապա զմնացորդ աւետարանն ընթերցցին։

Եւ եղեւ իբրեւ վերացան 'ի նոցանէ հրեշտակքն յերկինս, ասեն ցմիմեանս հովիւքն. եկայք երթիցուք մինչեւ ցԲեթղեհէմ, եւ տեսցուք զինչ է բանս այս որ եղեւ, զոր տէր եցոյց մեզ։ Եւ եկին փութանակի, եւ գտին զՄարիամ եւ զՅովսէփ, եւ զմանուկն եդեալ 'ի մսուր, եւ ծանեան վասն բանին՝ որ ասացաւ նոցա ըզմանկանէն։

Եւ ամենեքին որ լսէին՝ զարմանային վասն բանիցն զոր խօսեցան ընդ նոսա հովիւքն։ Եւ Մարիամ զամենայն ըզբանս զայսոսիկ պահէր, եւ խելամուտ լինէր 'ի սրտի իւրում։

Եւ դարձան հովիւքն՝ փառաւոր առնէին եւ օրհնէին զԱստուած վասն ամենայնի զոր լուան եւ տեսին, որպէս պատմեցաւ նոցա։

Ապա զմնացեալն 'ի փառք 'ի բարձունսն՝ երգեսցեն. Եւ յամենայն ժամ։ Երգ.

Արեգակն արդարութ̃ե այսօր յայտնեցար ազգի մարդկան, մարդ եղեալ սրբեցեր զջուրս, վերածնեալ զմեզ մկրտութեամբն սրբոյ Հոգւոյն. Ի վայելչութ̃ի սրբոց քոց յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ Մարդ եղեալ սրբէ։

Քարոզ՝ Սուրբ զաստուածածինն։ Կեցո՛։ Աղօթք՝ Ընկա՛լ ո Տէր զաղաչանս։ Քարոզ՝ Սուրբ խաչիւս։ Աղօթք՝ Պահպանեա՛։

# ԿԱՆՈՆ

## ԾՆՆԴԵԱՆ

### Ի 6ն ՅՈՒՆՎԱՐԻ

Ի հինգերրորդ ժամու գիշերոյ՝ հարկանի կոչնակ, Հայր և մեծացուցէ յաւագ խորանն ասի։

Ի ճաշուն՝ զոյգ կոչնակ. և զկնի սուրբ պատարագին և ջրօրհնեացն. շարական ասի, Արեգականն արդարութեան ասելով՝ զսրբազան Պատրիարքն տանին 'ի վեհարանն. Մաղթանք՝ Եւ վասն սուրբ խաչի. քարոզ՝ Սուրբ խաչիւս։ Աղօթք՝ Պահպանիչ. համբուրելով զսուրբ աջն հայրապետին, և երթիցեն խաղաղութեամբ, 'ի սեղան առ 'ի ճաշել։

### Ի 7ն ՅՈՒՆՎԱՐԻ

Ի ճաշու ժամուն՝ զոյգ կոչնակ. վերաբերումն գնի 'ի սուրբ Գլխադիրն. և հանդիսաւոր սուրբ պատարագն յաւագ խորան. զոյգ բուրվառ. 'ի թափօրին դպիրքն զոյգ զոյգ ընթանալով քաղցրաձայն եղանակեն, Այսօր տօն է Ծննդեան աւետիս, և այլն։ Եւ զկնի միոյ միոյ տանն, միաբերան երգեն մանկունքն ասելով։

**Քս ծնաւ, և յայտնեցաւ ։**

### Ի 14ն ՅՈՒՆՎԱՐԻ

Զկնի գիշերային ժամերգութեան՝ ամենայն բազմութեամբ երթան 'ի սուրբ Յարութիւն առ 'ի մատուցանել զհանդիսաւոր սուրբ Պատարագն 'ի վերայ կենդանատու Գերեզմանին Քրիստոսի։ Եւ յետոյ գան առ 'ի սուրբ Աթոռս, և երթան 'ի սեղան 'ի ճաշել։ Եւ յետ սեղանոյն գնան առ Սրբազան Պատրիարքն առ 'ի օրհնել զպատրիարքարանն. շարական ։

**Խորհուրդ մեծ. պէս յերես 10։** Դկ

Այս աւետարան՝ Ղուկ. Գ. գլ. 8 համ.
Եւ հովիւքն էին. յերես 10։ մինչ 'ի մարդիկ հաճութիւն ։
Եւ երգեսցեն զմի մասն փառք 'ի բարձունսն։
Ընթերցին և զմնացորդ աւետարանին.
Եւ եղեւ իբրեւ վերացան. յերես 11։ մինչ որպէս պատմեցաւ նոցա ։

Այս երգեսցեն զմնացորդ փառք 'ի բարձունսն. Եւ յամենայն ժամ։ Երգ. Արեգակն արդարութեան այսօր. յերես 11 ։

Այս Սարկաւագն ասէ. Եւ եւս խաղաղութեան։ Պատրիարքն. Օրհնութիւն և փառք. և այս շարական ։

Լոյս 'ի լուսոյ 'ի հօրէ առաքեցար և մարմնացար 'ի սուրբ կուսէն, զի վերստին նորոգեսցես զապականեալն Ադամ։ Դշ

Դու աստուած 'ի յերկրի երեւեցար և ընդ մարդկան շրջեցար, և փրկեցեր զմեղերս յանիծիցն Ադամայ։

Քեզ 'ի յերկնից վկայեալ Հօր քո ձայն. ասէ դա է իմ Որդի. և Սուրբ Հոգին ընդ քեզ յայտնեաց աղաւնակերպ երեւմամբ ։

Ընդ քեզ որ հոգւով և հրով մաքրեցեր ըզ մարդկան աղտեղութիւն, որպէս զաստուած և ըզ փրկիչ ամենեքեան օրհնեսցուք ։

Փրկիչն երեւեցաւ և զաչ-

Դկ խառնս մարմնեցոյց 'ի պատրա-
նաց թշնամւոյն. որդեգ-
րութիւն շնորհելով 'ի ձե-
ռըն մկրտութեան։
Զբով կիզուն ըզմեղս մեր
այսօր երեւեալ ապրեցու-
ցիչն, և զովացուցանէ զաշ-
խարհս ծայրին ջրովն։
Ըզ գլուխ վիշապին փըշ-
կեցըն ջախջախեաց 'ի յոր-
դանան 'ի գետն, և ինքեան
իշխանութեամբ զամենե-
սեան ապրեցոյց։
Զհին մարդըն նորոգելով
փրկիչն 'ի մկրտութի գայ
այսօր, զի զապականեալ ըզ-
բնութիւս ջրով նորոգս գոր-
ծեսցէ, անապական զգեստ
փոխարէն տալով մեզ։
Մկրտի Քս եւ սրբին
ամենայն արարածք. և տայ
մեզ թողութիւն մեղաց ջը-
րով և հոգւով վերասրբե-
լով ըզմեզ։

Ալէլուիա Ալէլուիա (ձայնիւ).
Տուն Իսրայէլի օրհնեցէք զտէր. տուն Ահարոնի օրհնեցէք զտէր։
Տուն Ղեւեայ օրհնեցէք զտէր. երկիւղածք Տեառն օրհնեցէք զտէր։
Օրհնեալ տէր 'ի Սիոնէ. որ բնակեալն է յԵրուսաղէմ։

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։ Գ. գլ. 16 համ.

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ իբրեւ մկրտեցաւ Յի-
սուս, ել վաղվաղակի 'ի ջը-
րոյ անտի. և ահա բացան
նմա երկինք. և ետես զհո-
գին Աստուծոյ՝ զի իջանէր
իբրեւ զաղաւնի, և գայր
'ի վերայ նորա։
Եւ ահա ձայն յերկնից՝ որ
ասէր. դա է որդի իմ սի-
րելի, ընդ որ հաճեցայ։

Եւ ապա օրհնեն զջուրն ասելով երիցս. Օրհնեսցի և սրբեսցի ջուրս։ Եւ յետոյ շարականս։

Մկրտի Քրիստոս և սըր- Դձ
բին ամենայն արարածք.
և տայ մեզ թողութիւն
մեղաց ջրով և հոգւով
վերասրբելով ըզմեզ։

Քարոզ՝ Սուրբ խաչիւ։ Աղօթք՝ Պահպանեա. Տաղ՝

Այսօր ձայնըն հայրական
յերկնից իջեալ հանդիսա-
կան. սիրեցելոյ որդւոյ
վկայն. այ յորդորէ, գետ
յորդորէ, գետ յորդանան.
յորդորական ձայնիւ եր-
գէր՝ մեծ կարապետըն
յովհաննէս։

Այսօր երկինք երկինք եղեն. երեւելով աստուածորդւոյն. սիրով եկեալ ՚ի մկրտել. այ յորդ:

Այսօր վերին դասք հրեշտակաց. ուրախացան ընդ սուրբ գալուստ. աստուածորդւոյն ՚ի յորդանան. այ յորդորէ:

Այսօր եկեալ աստուածորդին. ՚ի յորդանան խոնարհութեամբ. ջրով մկրտել ՚ի յովհաննէ. այ յոր:

Այսօր մկրտիչն յովհաննէս. ՚ի մկրտելն հրաժարէր. թէ ինձ պարտ է ՚ի քէն մկրտել. այ յորդորէ:

Այսօր գոչէր քաղցր ձայնիւ Աստուածորդին կարապետին. պարտ էր զօրէնսն կատարել. այ յոր:

Այսօր յովհաննէսն դողալով. ձեռօքն ըզտէրն մկրտէր. ՚ի մեծ յորձանսն յորդանանու. այ յոր:

# ԿԱՆՈՆ

## ՆԱԽԱՏՕՆԱԿԻ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻՆ

### ՈՐ Ի 13ն ՓԵՏՐՎԱՐԻ

Յերեկոյին զըգ կոչնակ: Ջ կնի յայսմաւուրքն խոնարհեցա: Արբեցա: Լոյս զուարթ: Մեսեդի գալստեան. Օրհնեալ եկեալ: Տէր աստուած մեր: Քարոզ՝ Աստուածք: Սուրբ աստուած՝ որ եկիր և գալոց ես: Հմբ՝ աջ. Մարմնացեալդ: Քարոզ՝ Վասն խաղաղութեան: Աղօթք՝ Հայր գթած. Եւ զգեցցին միաբան և ելցեն խաչիւ և աւետարանաւ ՚ի թափօր Սրբ. Եւ ևս խաղաղութեան: Թափօրականն՝ Օրհնութիւն և փառք. և ելցեն ընդ Ս. Էջմիածնի դրունն ասելով շարական:

Այսօր անըսկզբնական ծընունդ հայրական ծոցոյ բանն եկաւորեալ ՚ի տաճարն. ընծայէ զարարածըս հօր ՚ի յերկինս: ԴՁ

Այսօր բարձեալ եղեւ ՚ի գիրկս ծերունոյն, որ բանիւ զարարածըս բարձեալ ունի, օրհնաբանեսցուք:

Այսօր և մեք հաւատացեալքս ընդ ծերունոյն Սիմէոնի ըզ Բանն համագոյ Հօր և սուրբ Հոգւոյն օրհնաբանեսցուք:

Այսօր ՚ի տաճարն եկեալ կենարարն, և ՚ի գիրկսն Սիմէոնի գրկուեցաւ. զոր խնդութեամբ ընկալաւ Երուսաղէմ:

Այսօր երկիրս երկինք անուանեցաւ, զի տէրըն տերանց իջեալ յերկնից 'ի յերկիր, և ընծայիլ յանձն առնու 'ի գործոյ ձեռաց իւրոց։

Այսօր հեթանոսաց լոյս ծագեցաւ Քրիստոս Աստուած․ և փառք իւրում ժողովրդեանն Իսրայէլի։

---

Հանգեալ 'ի բանն․ Մարկ․ Եւ ևս խաղաղութեան․ Թափորականն․ Օրհնութիւն և փառք․ և նախատօնակ արասցեն առեալ զՃարգն Օրհնեմք զքեզ իբր սարքն․ և Թափորականն խնկարկեսցէ շուրջ զԹափօրիւ որպէս յամենայն 'ի նախատօնակս։

ԴՁ Օրհնեմք ըզքեզ որ աւաքեցար 'ի հօրէ, անճառելի Բանդ Աստուած․ յանձըն առեր մարմնանալ 'ի սըրբոյ կուսէն․ աստուած հարցըն մերոց։

Այսօր եկիր 'ի տաճարն անհասանելի փրկիչ, և 'ի գիրկսըն Սիմէոնի գըգուեցար․ աստուած։

Ուստի և Սիմէոն հոգևոր հընչմամբըն աղաղակէր․ արձակեա ըզծառայս քո Տէր ըստ բանի քում 'ի խաղաղութիւն․ աստ։

Ըզ տէր օրհնեցէք, և բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Գ

Օրհնեցէք․ Զծընեալն յամենասուրբ յորովայնէ յանարատ 'ի կուսէն օրհնեցէք։

Օրհնեսցէ․ Զեկեալըն այսօր 'ի տաճարն, զընկալեալն 'ի գիրկսն Սիմէոնի օրհնեցէք։

Աթոռ քրովբէական երևեալ այսօր Սիմէոն, զաստուածորդին 'ի գիրկս իւր բարձեալ մարմնով, զոր զօրք երկնից 'ի բարձունըս հանապազ մեծացուցանեն։ Մ

Հոգւովըն գոչէր, ցընծայր ալևորըն ծերունին ասելով, ամէ Թագաւորն անմահ, զոր զօրք։

Արտասուելով աղերսէր, արձակեա զիս 'ի խաղաղութի անարատ ծընողի քո բարեխօսութեամբ, զոր։

Որ փառաւորեալն 'ի բարձունս իմանալի զօրութիւնքըն, այսօր 'ի տաճարն եկիր յընծայումըն Քրիստոս․ որ ընծայես զարարածըս բար-

ձրենյ քում հօր ։

Ի գիրկս մարմնով բար-ձեալ եղեր 'ի ծերունւոյն, որ բանիւ զաշխարհս բար-ձեալ ունիս Քրիստոս, որ վասն մեր մարմնացեալ 'ի սրբոյ կուսէն ։

Վասն որոյ և մեք ընդ Սիմէ-օնի գոչեսցուք, որ 'ի հօ-րէ լուսոյ լոյս ծագեցեր մեզ և կեանք. փառք գալստեան քո տէր ։

Յաւարտ նախատօնակին Սաղմոս ։

Ալէլուիա ալէլուիա. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ ։

Փոխ. Օրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր զի սքանչելիս արար ։

Գիրք Ղևտացւոց. Եւ ասէ տէր ցմովսէս ։

Ալէլուիա ալէլուիա, Օրհնեալ եկեալ անուամբ տեառն, օրհնեալ որ գա-լոց ես ։

Որթիւ. Աւետարան Ղուկասու. Եւ իբրև լցան. գլ. Բ. համ. 22. վերջ 40 համ.

Ընթերցցին և զառաւօտեան զչորեսին Աւետա-րանն 'ի ճակատ հանգստին հետևեալ կարգաւ ։

Առաջին շարական ։

ԱՁ Մարմնացեալդ 'ի կու-սէն նախայաւիտեան բանդ, այսօր 'ի տաճարն եկիր կա-տարել զօրէնս վասն փրկ-ութեան հեթանոսաց ։

Որ յանարատ աթոռն նստես բարեբանեալդ 'ի հրեշ-տակաց. այսօր 'ի Սիմէոնէ բառնալով 'ի գիրկս. որ ըն-ծայեցես ընդ մեզ 'ի կեանս սրբ յաւիտենից ։

Որ արձակիչդ ես կապելոց պարգևատու ամենեցուն. այսօր հայցմամբ ծերունւոյն արձակեաց և զմեզ ընդ բազ-մամբք 'ի կապանաց մահու 'ի կեանսդ յաւիտենից ։

Զկնի Որթիւ. Աւետարան Մատթ. Մի համարիք եթէ եկի. գլ. Ե. համ. 17. վերջ. յարքայու-թիւնն երկնից. համ. 20.

Երկրորդ շարական ։

Այսօր անըսկզբնական. ԴՁ
յերգս 14. (երգս պռան միայն).

Զկնի Որթիւ. Աւետարան Մարկ. Այլ վասն աւուրն այնորիկ. գլ. ԺԳ. համ. 32. վերջ. արթուն կացէք. համ. 57.

Երրորդ շարական.

Լոյս 'ի լուսոյ 'ի հօ. յերգս 12. ԴՁ

Զկնի Որթիւ. Աւետարան Ղուկ. Հուր եկի ար-կանել. գլ. ԺԲ. համ. 49. վերջ. զժամն քննեն. համար 59.

Չորրորդ շարական ։

Այսօր 'ի տաճարն եկեալ. ԴՁ
յերգս 14.

Զկնի Որթիւ. Աւետարան Յովհ. Ի սկզբանէ էր բանն. գլ. Ա. վերջ Յիսուսի Քրիստոսի ե-ղեն. համ. 17.

(Ասա Եւ ևս խաղաղութեան. Վասն 'ի վերուստ. Ողորմեաց. Եւ Տեառնագրեսցեն զանդաստանն հե-տևեալ եղանակաւ)

ԴՁ

Ն·ք՝ Օրհնեցի և պահպանեցի արեւելեան կողմն աշխարհիս։

Ապա գնասցեն յարեւելս յանդիման արեւմտից. առնլով շարականն։

ԱՁ Մարմնացեալդ 'ի կուսէն.

ձայն 16. (երեք փոխն միայն)։

Ասա Սարկաւագն, Ամէն ալէլուիա ալէլուիա ալէլուիա։

Երկրորդ՝ Օրհնեցի և պահպանեցի արեւմտեան կողմն աշխարհիս։

Ապա գնասցեն 'ի հիւսիս յանդիման հարաւոյ առնլով շարականն.

ԴԿ Այսօր 'ի տաճարն եկիր փրկիչ. և ծերունւոյն 'ի գիրկս ընկալեալ սնէր. արդ արձակես զծառայս քո տէր։
Այսօր աշխարհի ցուցար լոյս, և փրկութիւն տիեզերաց քրիստոս աստուած. որ մարդասէրդ ես կեցո զմեզ։
Այսօր իմանալի արեգակն, որ ծագեցար տիեզերաց քրիստոս աստուած. որ։

Ասա Սարկաւագն. Ամէն ալէլուիա ալէլուիա ալէլուիա։

Երրորդ՝ Օրհնեցի և պահպանեցի հարաւային կողմն աշխարհիս։

Ապա գնասցեն 'ի հարաւ յանդիման հիւսիսի առնլով շարականն.

ԴՁ Ընդ քեզ որ հոգւով և հրով.

ձայն 12.

Ասա Սարկաւագն, Ամէն ալէլուիա ալէլուիա ալէլուիա։

Չորրորդ՝ Օրհնեցի և պահպանեցի հիւսիսային կողմն աշխարհիս։

Եւ եկեսցեն յարեւմուտս առնլով շարականն.

ԴԿ Ի սկզբանէ բանն աստուած մարմնացաւ 'ի կուսէն, այսօր գրգուեցաւ 'ի տաճարին։
Խայտայր ալեօքն ծերունին աստուածորդւոյն 'ի գիրկս իւր, և օրհնէր զաստուած ասելով։
Արդ արձակես զծառայս քո տէր ըստ բանի քում 'ի խաղաղութիւն. զի տեսին աչք իմ զքո փրկողդ աստուած։

Սարկաւագն, Ամէն։
Օրհնութիւն և փառք։

Ապա ասասցեն Տաղ.

Քո փառաց Թագաւորն,
այսօր եկեալ յընծայումն.
կատարելով նա զօրէնս.
քառասնօրեայ գալստեամբն.
Զոր մարգարէն Եսայի.
յառաջագոյն գուշակեաց.
Յերուսաղէմ քաղաքի.
Սիմէոնի ծերունւոյն։
Աստուածային հրամանաւն

կայր ծերացեալ 'ի տաճարն.
ոչ տեսանէր նա զմահ.
մինչեւ տեսցէ նա զծնեալն։
Բարբառ եղեւ գալստեան.
և աչագին որոտման,
Ճարտարապետըն Քրիստոս.
որ յընծայումն էր եկեալ։

Եւ լուցցեն զպատրաստեալ երիս մոմսն.

Ապա քարոզ՝ Սուրբ խաչիւս. Պահպանիչ.

Սարկաւագն, Լոյս եւս խաղաղութեան։ Թագաւորականքն, Օրհնութիւն և փառք։

Ապա եկեսցեն Թագաւորականք և մտցեն ընդ մեծ դուռն գաւթին 'ի Ս. Յակոբ ասելով շարականս.

Բձ Որ ըզխորհուրդ քո գալըստեանդ յառաջագոյն գուշակեցեր, մարգարէիւքն խորհրդելի զօրս ընտրեցեր յետ Մովսեսի. որք խօսեցան Հոգւով սըրբով բազմապատիկ օրինակօք, տէ՛ր. մեզ փրկիչ ողորմութիւն և ըզմեղաց ըզթողութիւն։

Իմ մերձենալ ամաց վերջին, զոր տեսանողքըն ծանուցին, ըզհասանել մեր փրկողին առ 'ի վախճան ժամանակին. երեւեցար 'ի մէջ մարդկան զգեցեալ ըզկերպ ծառայական. տէ՛ր։

Իվեցերորդ աւուր զԱդամ ստեղծեր 'ի տիպ քո տիրական, որ ոչ պահեալ զպատուիրանըն մերկացաւ ըզպատմուճանն. իսկ նոր Ադամդ 'ի վերջ դարուն այց արարեր կորուսելոյն. տէ՛ր։

Տաճար լուսոյ անըմատուերին և անաղամուտ անճառ բանին. որ ըզնախնեաց մօրն Եւայի բարձեր զանէծսըն տրտմալի. հայցեա յՈրդւոյ քո միածնի Հօր հաշտութեանըն միջնորդի, բառնալ 'ի մէնջ ըզխռովութիւն և տալ զոգւոց խաղաղութիւն։

Եւ ապա քարոզ՝ Խնդրեսցուք. Կեցո՛. Թագաւոր խաղաղութեան։ Օրհնեալ է Տէր մեր. Օրհնեալք եղերուք. և արձակեսցին։

(Եթէ օրն անձրեւային իցէ, և սաստկեսցին չկարենալ արտաքս, յայնժամ վարեսցեն ըստ Տօնացուցին։)

Եւ զկնի մերկացեալ զզգեստս. տարցեն զՍրբազան Պատրիարքն 'ի Պատրիարքարան, նոյնպէս և յառաւօտուն՝ ասելով շարական։

Մարմնացեալդ 'ի կուսէն. Աձ
յերես 16. (Երեք փոխ միայն)։

## ԿԱՆՈՆ

### ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ՈՒՐԲԱԹ ԱՒՈՒՐ

Օրհնի առաւօտու ժամուն, ըստ նախնեաց սովորութեան երթան 'ի վանս Առորոց համակ միաբանութեամբ և տէրունական ուխտաւորօք յերկրպագութիւն Սրբոյ տաճարին, որ յանուն Սուրբ Աստուածածնի կառուցեալ կայ և է տուն սրբոյն Սարկաւագ ետարանչին, առ 'ի մատուցանել անդ զսուրբ Պատարագն. և յետ գրքոյն՝ սակս ինչ առանձնասութիւն լինի յաղագս տեղւոյն և կամաւոր ողորմութեան։

---

Ի պահոց երկրորդ եօթնեկի շաբաթ առաւօտուն, յորում տօն է Կիւրղի Երուսաղէմայ հայրապետին, յառաւօտեան ժամերգութեանն 'ի ժամու Սուրբ Աստուածին տայի շուրջառ միայն Ս. Պատրիարքին և առաջի գընասցեն ամենայն առեան և սարկաւագըն խնկօք և մոմեղինօք ասելով զմենկունքն, և երթեցեն յեկեղեցի սըրբոյն Սոփիանեայ համակ եղ սեղանոյն (աւագանին) Կիւրղի, շարականագորցին 'ի դասս դասս, և խնկարկեսցէ Սրբազան Պատրիարքն։ Ապա համբարեցեն կարգաւ զալք Կիւրղին 'ի վերայ աւագանին և անդէն աւարտեալ զժամերգութիւնն, ապա պատտեսցեն զսուրբ Պատարագն 'ի վերայ Աւագանին Կիւրղի.

ԱՁ

## ԿԱՆՈՆ

### Ի ՏՕՆԻ ՍՐԲՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ՄՏԻՆ Ի ՎԻՐԱՊՆ

Օրհնի առաւօտեան ժամերգութեն, գնասցեն 'ի դուռն Ս. Սինեա Եկեղեցւոյ, մոմեղինօք և զգեստ բուրվառաւ. տացեն շուրջառ միայն Ս. Պատրիարքին։ Սարկաւագն, Նոյն եւս խաղաղութեան։ Պատրիարքն, օրհնութիւն և փառք. դնէ խունկ, և առնու զԱջն Լուսաւորչին որ պատրաստեալն է 'ի Ս. Սինեա, և սկսանին շարական.

Հրաշափառ սատրեալ ԴՁ
և միշտ բարեխնամող. որ
յառաջ գիտութեամբ ըզ-
փրկութի Հայաստանեայց
ընկըզընաւորեալ, 'ի պար-
թևական ճեղապարտ ազ-
գէն լուսաւորիչ մեզ շնոր-
հեցեր. վասն որոյ բարե-
խօսութեամբ սորա փըր-
կիչ կեցո ըզմեզ այժմ և 'ի
քո յահեաւոր գալըստեանն։
Հրաշալի զարմանցմամբ ե-
րանելին տէր Գրիգոր դատա-
նելի ըզչարչարանս 'ի յանձն
էառ, և երիւք հընգօք ա-
մօք 'ի մէջ թունաւորացըն
բնակէր անդընդային տան-
ջանօքն 'ի վիրապին. վասն։

Հրաշագործ քո բանիւդ և մեծ ողորմութեամբ, ելեալ բժշկէր զհարուածեալն 'ի դիւաբաղխ սաստիցն. Երկրպագուս առնելով զամենեսեան սուրբ Երրորդութեանդ. փառս։

Ի սկսանիլ Հրաշափառին բացցեն զաւագ խորանի վարագոյրն. և դարձցի Թափորն շուրջ Եկեղեցւոյ եւ եկեսցեն յատեանն և Ս. Պատրիարքն ելցէ յաւագ խորանն հանդերձ խնկարկու սարկաւագօքն։ Յաւարտել շարականին ասասցէ սարկաւագն. Վասն հիւանդաց։ Ս. Պատրիարքն. Փարատեա զցաւս։ Սարկաւագն, Սուրբ խաչիւս։ Պատրիարքն Պահպանիչ. և դիցեն զսուրբ աջն առաջի աւագ խորանին 'ի բեմն, և համբուրեսցեն եկեղեցականք, և ապա ամենայն ժողովուրդն կարգաւ. Եւ ապա պաշտեսցեն զսուրբ խորհուրդ պատարագին 'ի սեղանն Ս. Լուսաւորչին Եկեղեցւոյ Ս. Ստեփաննոսի։

## ԿԱՆՈՆ
## ԾԱՂԿԱԶԱՐԴԻ

Շաբաթ երեկոյին գնան 'ի Ս. Յարութիւն, և որովհետեւ աստ 'ի Ս. Յակոբ ժամերգութիւն ոչ լինի, ուստի բացումն վարագուրին միայն 'ի հետեւեալ երեկոյն ընդ դուռն բացին։

## ԿԱՆՈՆ
## ԶԱՏԿԻ ԿԻՒՐԱԿԷԻՆ

Երեկոյին զՍ. Պատրիարքն տանին 'ի Ս. Եկեղեցին հետեւեալ եղանակաւ. Առաջոյ Գաւթին 'ի բակն տան շուրջառ Ս. Պատրիարքին խաչիւ և զաւազանաւ։ Սարկաւագն՝ Եւ ես խաղաղութեան։ Պատրիարքն, Օրհնութիւն և փառք, և գնան յեկեղեցին ասելով շարական։

Հրաշափառ տարուած. Դ·Զ

յերես 19։

Եւ յորժամ Ս. Պատրիարքն մտցէ 'ի ներքս յեկեղեցին ընդ դուռն Գաւթին, ապա ասեն շարականս։

Ուրախ լեր սուրբ եկեղեցի, քանզի Քրիստոս արքայն երկնից այսօր պըսակեաց ըզքեզ խաչիւն իւրով. և զարդարեաց զամուրըս քո սքանչելի փառօքն իւրովք։ Գ·Զ

Խնդա յոյժ դուստր Սիոնի. քանզի երկիրս երկինք եղեն այսօր վերստին քո նորոգմամբ, և Թագաւորն Երկնաւոր հաճեցաւ բընակել 'ի քեզ։

Ընդ դասս երկնաւոր զօրացն վերառեալ տօնեմք քեզ այսօր զանդադար փա-

ռատրութիւնս․ ուրախ լեր
հարսն անարատ անքննին
քո խորհրդով։

Փոխ հօր ե։ Ալժմ ե Թըղ ե։

Աղբերացուսցես 'ի մեզ ըղձ-
շնորհս քո զողորմութեան․
տէր աստուած խոստովա-
նեցօք հաւատով սուրբ
զերրորդութիւնդ, զհայր
և զորդի և ըզսուրբ զհո-
գին յաւիտեանս ամէն։

Եւ կացեալ յատեանն առաջի բեմին ասասցեն
Սաղմոս։

Ուրախ եղէ ես՝ ոյք ասէ-
ին ցիս, 'ի տուն տեառն
երթիցուք մեք։
Հաստեալ կային ոտք մեր ա-
դրունս քո Երուսաղէմ։
Երուսաղէմ շինեալ որ-
պէս քաղաք․ և բնակու-
թիւն իւր շուրջ զնովաւ։
Անդ ելանէին ազգք ազգք
տեառն, 'ի վկայութիւն իս-
րայելի, խոստովան լինել
անուան տեառն։
Անդ արկեալ են աթոռք
դատաստանի․ աթոռս ար-
կեալ են 'ի տան Դաւթի։
Հարցէք զողջոյնս Երուսա-
ղեմի, և զշինութենէ՝ ոյք
սիրէք զտէր։

Եղիցի խաղաղութիւն 'ի զօ-
րութեան քում, և շինու-
թիւն յաշտարակս յամու-
րըս քո։
Վասն եղբարց և ընկերաց
իմոց խօսեցայ զխաղաղու-
թիւն․ վասն քոյ և վասն
տան տեառն Աստուծոյ մե-
րոյ խնդրեցաք զբարութի
'ի քէն։
Տուր զօրութիւն ծառայի
քո․ կեցո զորդի աղախնոյ
քո․ և արա առ իս նշան
բարութեան։
Տեսցեն ատելիք իմ և ա-
մաչեսցեն, զի դու տէր օգ-
նեցեր ինձ, և մխիթարե-
ցեր զիս։
Փառք հօր և որդւոյ և։

Սարկաւագն, Սուրբ եկեղեցեաւս
աղաչեսցուք զտէր՝ զի սո-
վաւ փրկեսցէ զմեզ 'ի մե-
ղաց․ և կեցուսցէ շնորհիւ
ողորմութեան իւրոյ։ Ամե-
նակալ տէր աստուած մեր՝
կեցո և ողորմեա։

Պատարագիչն։ Ի մէջ տաճարիս,
և առաջի աստուածընկալ
և պայծառացեալ սուրբ նը-
շանացս, և սուրբ սեղանոյս՝
խոնարհեալ երկիւղիւ եր-
կիրպագանեմք․ զսուրբ և

զՀրաշալի և զյաղթող ըզ-
յաղթութիւնդ քո փառա-
ւորեմք. և քեզ մատուցա-
նեմք զօրհնութիւն և ըզ-
փառս ընդ Հօր և ընդ սըր-
բոյ Հոգւոյդ. այժմ և:

Սարկ. Սուրբ խաչիւս: Պատրիարքն՝ գաւազանիւ. և ապա՝ ընթերցցին զյայտնաւորն:
Ձեռն յայտնաւորին մինչև զգեստաւորեսցին ասի չարական:

Դկ Այսօր մեծ աւետիք Ա-
դամայ նախաստեղծին տը-
ւաւ. արի որ ննջես լու-
սաւոր եղեւ քեզ յարու-
ցեալըն Քրիստոս. ազատ-
եալ հարքըն մերոց:

Այսօր ձայն աւետեաց Ան-
ւայի գոչեն լուսեղէն զօ-
րքն իւ զուարթունք. տեսաք
յարուցեալ ըզյարութիւ-
նըն քո ըզՔրիստոս ազատ-
եալ հայր:

Այսօր հրեշտակք յերկնից
իջեալ տան զաւետիս մարդ-
կան. յարեաւ խաչեցեալն
և յարոյց ըզձեզ ընդ ին-
քեան. ազատեալ հայր:

Այսօր տէրն մեր յարեաւ.
եկայք պարեսցուք ընդ հը-
րեշտակս յաղթական եր-
գով. օրհ:

Այսօր սիւն լուսոյն ծա-
գեալ սուրբ եկեղեցւոյ
յարուցեալն 'ի մեռելոց
Քրիստոս. օրհ:

Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան:
Թափօրապետն. Օրհնութիւն և փառք:

Եղանակն ընդ գրութս Ս. Էջմիածնի և գնան 'ի մեծ բակն ասելով չարական:

Այսօր զատիկ մեր զեն- Աձ
մամբ Քրիստոսի. արդարացո՛ւք
ամէն ցընծութեամբ նորո-
գեալքս 'ի հնութենէ մե-
ղաց ասելով, Քրիստոս յա-
րեաւ 'ի մեռելոց:

Այսօր հրեշտակըն լուսա-
փայլ 'ի յերկնից իջեալ զա-
հուրեցոյց ըզպահապան-
սըն, և սուրբ կանանցըն
քարոզէր ասելով. Քրիս:

Այսօր նոր Իսրայէլ կոչե-
ցեալք 'ի Քրիստոս. ազա-
տեալք արեամբ գառին
Աստուծոյ, պարեսցուք ընդ
երկնայնոցն ասելով. Քրիս:

Եւ յորժամ 'ի բակն հասանիցեն ասասցեն սաղմոս

Աւետիս. Աւետիս. Քեզ վայելէ օրհնութիւն աստուած 'ի Սիոն. և քեզ տացեն աղօթք յԵրուսաղէմ:

Գիրք. Գործք. Զ բանն առաջին. Ա.
Գլ. Վ, 'ի ծագս երկրի, 8 հմր.

Ալէլուիա. Ալէլուիա. Դու յարուցեալ գթասցիս 'ի վերայ սիոնի ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ.

Աւետարան Ղուկ. Եւ ահա երկուք. ԻԴ. գլ. 13 համ. վերջ. 'ի բեկանել հացին. 35 համ.

### Առաջին շարական.

ԱՁ Ընդ լուսանալ միաշաբաթին կանխեցին կանայքըն 'ի գերեզմանն, 'ի խընկել զանապականն մարմինն: Եւ գտին ըզվէմն բարձեալ 'ի դրանց գերեզմանին, և լուեալ բարբառ 'ի հրեշտակէն, եթէ յարեաւ քրիստոս և խափանեաց ըզմահ:

Եւ հանդիպեալ քո տէր առաքելոցն, և. տուեալ զողջոյն կենդանարար, առաքեցեր զնոսա 'ի փրկութի տիեզերաց:

Ձայնի Որթիւ. Աւետարան ըստ Յովհաննու. Յետ այսորիկ աղաչեաց. ԺԹ. գլ. 38 համ. վերջ եդին զյիսուս. 42 համ.

### Երկրորդ շարական:

ԱԿ Առաքեցար 'ի Հօրէ բանդ աստուած 'ի փրկութիւն ազգի մարդկան. օրհնեմք ըզքեզ սուրբ աստուած:

Ի գերեզմանն իջեր թագաւոր անմահ և 'ի հօրէ ոչ մեկնեցար. օրհ:

Ի յերրորդ աւուր յարեար աստուածապէս և 'ի յերկինս համբարձար. փառք յարութեան քո տէր. օրհ:

Ձայնի Որթիւ, Աւետարան Ղուկ. Եւ ահա այր մի անուն Յովսէփ. ԻԳ. գլ. 50 համ. վերջ փառս պատուիրանին. 56 համ.

### Երրորդ շարական:

Ի գերեզման քո կանխեցին կանայքն, զիւղս և զխունկս բերին 'ի պատիւ թաղման քո, զի զմեռոք ըզհողացեալս վերածեր 'ի կեանս: ԲՁ

Փոխանակ իւղոյն զհաւատս անբիծս և զաղաչանս մեր ընդ առաւօտեան կանանցն ընկալ. որք զողջոյն կենաց լուան եւայի ունկամբն:

Նոր աւետիս առաքելոցն յայտնեաւ յարուցիչըն մեր աւերեաց ըզդժոխս, և զթշնամին կապեաց 'ի յանլոյծ կապանս:

Ձայնի Որթիւ, Աւետարան Մարկոսի. Եւ իբրև երեկոյ եղեւ. ԺԵ. գլ. 42 համ. վերջ օծցեն զնա. ԺԶ. գլ. 1 համ:

Չորրորդ շարական ։

Բկ Քո յարութեամբդ փառաբեք վայելէ երկնայնամբն տէր ։ Օրհնեալ է քո յարութիւնդ աստուած, որ զմահ մահու ծանուցեր քոյին կամաւոր մահուամբդ · քո յաւ։ Գոչումն ահեղ հրեշտակին 'ի վիմին որ քարոզէր առ սուրբ կանայսն, յարեաւ տէրն 'ի մեռելոց · քո յաւ։

Ձայն Ութիւ · Աւետարան ըստ Մատթէոսի · Եւ յերեւ երեկոյ եղեւ · ԻԷ · գլ · 57 համ · վերջ հանդերձ զօրականօքն · 66 համ ։

Հինգերորդ շարական ։

ԱՁ Այսօր զատիկ մեր զենմամբ · յերես 22 ։

Ձայն Ութիւ · Աւետարան Յովհ · Եւ 'ի միաշաբաթուջն · Ի · գլ · 1 համ · վերջ · զայս ինչ ասաց ցնա · 18 համ ·

Վեցերորդ շարական ։

ԱՁ Սուրբ խաչն օգնական հաւատացելոց, կանգնեցաւ 'ի յերկրի յաղթող թշնամւոյն · Եկայք ժողովուրդք երկրպագեսցուք ։ Արարիչն Աստուած բարձրացաւ 'ի խաչին, և զմեռեալս մեղօք փայտին ճաշակմամբն, 'ի սմա նորոգեալ կենդանացոյց ։ Ի միասնգամ գովըստեան Աստուածորդւոյն, սուրբ խաչն երեւի և լուսաւորէ · զի նա է յոյս հաւատացելոց ։

Ալէլուիա · Նշանակեցաւ · փոխ՝ 'ի կորուստ · Աւետարան Յովհ · Իսկ հրեայքն · ԺԹ · գլ · 31 համ · վերջ · յոր խոցեցինն · 37 համ ·

(Եւ տեառնագրեսցեն զանդաստանն հետեւեալ եղանակաւ ։)

Սարկաւագն · Եւ եւս խաղաղութեան · Վասն 'ի վերուստ · Ողորմեա ·

Տէր ողորմեա · տէր ողորմեա · տէր ողորմեա ·

Օրհնութիւն և փառք հօր ·

Ամէն ալէլուիա · ալէլուիա · ալէլուիա ՍՐԿ ·

Օրհնեսցի և պահպանեսցի արեւելեան կողմն աշխարհիս, և այլն · ՔՀ ·

Եւ զնոյն յարեւելս ասելով շարականն ·

Յարուցեալ տէրն 'ի գերեզմանէն միածինն որպէս փեսայն, և լոյս փառաց ծագեաց յաշխարհս և երկինք և երկիրս ցընծային ։ Ակ

Մեծ է յարութիւն Աստուածորդւոյն քանզի դրունք երկնից բացեալ եղեն և հօտ անմահ բուրեաց

յաշխարհս և լցոյց զարա-
րածս ամենայն։
Զօրք երկնից իջեալ էին և
բանակեալ շուրջ զգերեզ-
մանաւն և հոգեղէն բար-
բառովն երգէին, տէր օրհ-
նեալ է քո յարութիւնդ։

Մրկ. Ամէն ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Քհ. Օրհնեսցի և պահպանեսցի արևմը-
տեան կողմ աշխարհիս, և այլն։

Եւ ապա երթիցեն 'ի հիւսիսակողմն յանդիման
հարաւոյ առնելով շարական։

Բձ Զայն աւետաւոր հը-
րեշտակին զուարճացոյց զա-
ռաւօտեան կանայսն. զքը-
րիստոսի պատմելով զյա-
րութիւն։
Մի յուսահատիք տըրտմու-
թեամբ, այլ ցընծացէք
բերկրելով խընկազգեացք
աստուածայնոյն, և փափա-
գողք յարութեանն։
Փութացարուք 'ի գալիլեա
աւետարանեցէք աշակեր-
տացն, եթէ յարեաւ Քրիս-
տոս և խափանեաց զմահ։

Մրկ. Ամէն ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Քհ. Օրհնեսցի և պահպանեսցի հարաւա-
յին կողմն աշխարհիս, և այլն։

Ապա գնասցեն 'ի հարաւային կողմն առնելով շարական։

Որ քո յարութիւնդ Դկ
օրհնեմք մարդասէր, աղա-
ղակելով տէր փառք քեզ։
Զոր օրհնեն սերովբէքն և
գովեն քերովբէքն. աղա։
Ընդադար բերանով ան-
հանգիստ բարբառով. աղա։

Ամէն ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։ Մրկ.

Օրհնեսցի և պահպանեսցի հիւսիսա- Քհ.
յին կողմն աշխարհիս, և այլն։

Ապա եկեսցեն 'ի կողմն արևմտեան առնելով
շարական։

Կանանցըն կանխելով Դձ
'ի թաղումըն կենդանւոյն
տեսին զվէմն 'ի դրանոյն 'ի
բաց մերժեալ։
Թափուր զգերեզմանն և
ունայն տեսանէին, և տըրտ-
մութեամբ լային յուսա-
հատեալք։
Մայր խաչեցելոյն զի՞ լաս
յուսահատեալ. քանզի Քրը-
իստոս փառօք մեծաւ յա-
րեաւ։

Ամէն։ Մրկ.

Օրհնութիւն և փառք։ Քհ.

Սուրբ խաչիւս։ Պահպանիչ։

Զկնի Նո եւս խաղաղութեան։ Օրհնութիւն և փառք, և երգիցեն թափորիւն 'ի բակն առաջի գաւթին ընդ մեծ դուռն վանաց ասելով շարականն։

Բկ Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց։

Ընդ արշալոյսն առաւօտուն կանխեալ կանանցն 'ի գերեզմանն ասելով. քրիստոս յարեաւ.

Եւ առ նոսա ասէր հրեշտակն, զի՞ խնդրէք ըզկենդանին ընդ մեռեալս. քրիստոս յարեաւ.

Փութացարուք ով սուրբ կանայք և պատմեցէք առաքելոցն ասելով. քրիստոս յարեաւ։

Ցորժամ հասանիցեն 'ի բակն, կանգնեսցին անդ կարգաւ, և ասասցեն հանգստեան շարական.

Աշ Որ անճառ տնօրէնութեամբ 'ի փրկութիւն ազգի մարդկան խոնարհեցար բանդ աստուած. այսօր հանգո և ըզմեր ըզննջեցեալսն ընդ սուրբս քո. որ միայն ես մարդասէր։

Որ անչարչարելիդ մարմնով եկիր կամաւ 'ի չարչարանս, և 'ի խաչին բևեռեցար, հեղեր զարիւնդ 'ի փրկութիւն. այսօր։

Որ թաղմամբն եռօրեայ ըզգըլորութիւն մահուն լուծեր, և կոխեցեր զիշխանն մահու, և վերածեր ըզնընջեցեալսն. այսօր.

Ած. Որ ըզհրեշտակին ըզձայնըն լուեալ հիացեալ բերկրեցար, բարեխօսեա վասըն մեր. մեք օրհնաբանեմք զօրհնեալդ 'ի կանայս

Որ ըզհօրն աստուած յորովայնիդ քում կրեցեր անկիզելի մորենի. բարե։

Որ զանշօշափելին յերկրի 'ի գիրկըս քո բարձեալ դիեցուցեր կաթնաւն. բարեխօ։

Խշ. Որ զանարատ բազուկս քո 'ի խաչին տարածեցեր քրիստոս աստուած, և նշան յաղթութեան եդեր մեզ. սովաւ ըզկեանըս մեր պահեա։

Որ զաշխարհակեցոյց բազկատարածութիւն խաչին քո քրիստոս աստուած զաւազան զօրութեան եդեր մեզ. սովաւ.

Փառք Հօր և որդւոյ և։

Որ ըզմեռեալսն ՚ի ճաշակմանէ փայտին յանցանաց, կենաց փայտիւն կենդանուծեցեր. սոխաւ ըզ։

Այժմ և միշտ և։

Որ հրաւիրեցեր յանմահութիւն զազգըս մարդկան անմահութեանց բաշխող Քրիստոս, աղաչանօք աստուածածնին այսօր. Հան.

Ալէլուիա. Ալէլուիա.

Ի խորոց կարդացի առ քեզ տէր, տէր լուր ձայնի իմում։

Եղիցին ականջք քո ՚ի լսել զձայն աղօթից իմոց.

Սուրբ աւետարանն Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու, Ե. գլ. 24 համ.

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ամէն ամէն ասեմ ձեզ. զի որ զբանն իմ լսէ, և հաւատայ այնմ՝ որ առաքեացն զիս, ընդունի զկեանսն յաւիտենականս. և ՚ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ ՚ի մահուանէ ՚ի կեանս։ Ամէն ամէն ասեմ ձեզ. զի գայ ժամանակ՝ և արդ էն իսկ է, յորժամ մեռեալք լուիցեն ձայնի որդւոյն այ. և որք լսիցեն կեցցեն։

Զի որպէս Հայր ունի կեանս յանձին իւրում. նոյնպէս ետ և որդւոյ ունել կեանս յանձին իւրում. և իշխանութիւն ետ նմա դատաստան առնել։ Եւ զի որդի մարդոյ է՝ ընդ այն զի զարմանայք. զի եկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքին որք ՚ի գերեզմանս կայցեն, լուիցեն ձայնի նորա։ Եւ եկեսցեն արտաքս, որոց բարիս գործեալ իցէ՝ ՚ի յարութիւն կենաց. և որոց զչար արարեալ ՚ի յարութիւն դատաստանաց։ Ոչ կարեմ ես յանձնէ առնել և ոչինչ. այլ որպէս լսեմ՝ դատիմ, և դատաստանն իմ արդար է. զի ոչ խնդրեմ զկամս իմ, այլ ըզկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս։

Յետոյ մտանեն յեկեղեցին առեալ շարական.

Փառաբանեմք զՀօր որդի ԴԶ
որ զմահն մեր խափանեցեր, զդժոխս աւերեալ յարեար յաւուր երրորդի. փառք յարութեան քո տէր։
Հրեշտակապետին իջումն որ ըզպահապանսն երկիւ-

ղիւ զարհուրեցոյց առ դրանըն գերեզմանին. փառք։

Եւ ըսքանչելի սուրբ կանանցն աւետարանէր աւետիս, յարեաւ Քրիստոս յարուցիչըն մեռելոց. փառք։

Քարոզ՝ Սուրբ խաչիւս։ Աղօթք՝ Պահպանիչ։
Մերկանան ՚ի զգեստուցն և ապա կատարի երեկոյեան ժամերգութիւնն։
Յետ ժամերգութիւն տանին զՍ. Պատրիարքն ՚ի վեհարանն աւելով շարական։

ՃԶ Այսօր յարեաւ ՚ի մեռելոց փեսայն անմահ և երկնաւոր. քեզ աւետիք խնդութեան հարսն ՚ի յերկրէ եկեղեցի. Օրհնեա ՚ի ձայն ցնծութեան զաստուած քո Սիոն։

Այսօր անճառ լոյսն ՚ի լուսոյ լուսաւորեաց զմանկունս քո, լուսաւորեա Երուսաղէմ, քանզի յարեաւ լոյս քո Քրիստոս. օրհ։

Այսօր խաւարն անգիտութեան հալածեցաւ երրեակ լուսովն. և քեզ ծագեաց լոյս գիտութեան յարուցեալն ՚ի մեռելոց Քրիստոս. օրհ.

Կամ Ս. խաչի. Սուրբ խաչիւս։ Պահպանիչ. և արձակեցին խոնարհութիւն առնելով Ս. Պատրիարքին։

# ԿԱՆՈՆ
## ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ ԱՒՈՒՐ ԶԱՏԿԻ

Ըստ վաղեմի սովորութեան Ս. Աթոռոյն յետ ժամերգութեան և պատարագին, հանդիսաւոր Թափոր լինի ՚ի Ս. Յակոբ, հետեւեալ եղանակաւ։ Յընդ միջել Ս. պատարագին, զկնի առաքելոցին երթիցեն կարգաւ ՚ի Ս. Սինոս և զգեստաւորեսցին այսու եղանակաւ, երկոտասան Եպիսկոպոսք կամ պատուաւոր Վարդապետք ընդգեցցին զգեստ Եպիսկոպոսական խաչ և գաւազան ՚ի ձեռին. և այլք զքահանայական զգեստ առ հասարակ վարդապետք, մի մի մասունք ՚ի ձեռին և մոմեղինօք. և պատրաստ նըստիցեն եպիսկոպոսք ՚ի դասն Ս. Սակարի. և վարդապետք ՚ի յաջակողմեան դասն զգեստաւորեալ՝ ցաւարտ պատարագին։ Զկնի պատարագին Թափորապետն որ Ս. Պատրիարքն է, առցէ զՍուրբ Կենաց փայտն ՚ի ձեռն. և անձինք ոգիք չորք կալցին ՚ի վեր ՚ի վերայ Թափորապետին զամպհովանին, և շրջեսցին երիցս շուրջ յեկեղեցւոյ, և եկեալ ՚ի դասն, վարդապետք կացցեն ՚ի յատեանն, և Թափորապետն հանդերձ Եպիսկոպոսօք ելցեն ՚ի բեմն. և դպիրք ՚ի մէջ ժողովրդեան ՚ի մէջ սեանցն վերջին. և անկեալ ՚ի ծունկս ասասցեն Տէր ողորմեա, (երիցս) և ապա (Ճանապարհ) Զկնի Թափորապետն Տէր ողորմեա, Սարկաւագն, Աղաչեսցուք զամենակալն։ Աղօթք Առաջնորդեա. Օրհնեալ ես Տէր։ Սուրբ խաչիւս։ Թափորապետն Պահպանիչ. դպիրքն Հայր մեր, և ապա արձակեալ տանին ՚ի վեհարան զՍ. Պատրիարքն։

# ԿԱՆՈՆ

## ՀՈԳՒՈՅՆ ՍՐԲՈՅ ԳԱԼՍՏԵԱՆ

Շաբաթ երեկոյին գնան 'ի սուրբ Փրկիչ, զկնի ժամերգութեան՝ նախատօնակ առնեն շարական։

ԱՁ Օ՛ Հոգւոյն զգալուստն, իւր սարօքն։

Ապա 'ի ծունկս՝ անկեալ, Տէր ողորմեա, եայն։

Յայսմ երեկոյս կից Եկեսցէի ժամերգութեանն Հսկումն լինի, 'ի Ս. Յակոբ հետեւեալ եղանակաւ։

Եթէ Ս. Պատրիարքն իցէ առաւօտեան պատարագիչն. զփոխն՝ և զՀաւատամք խոստովանիմք՝ Սարկաւագունք ասասցեն. զկնի Եկեսցէին ամենայն զատակամն եկեսցէ յառաջ յատեանն և ասասցեն շարական։

ԲԿ Եկեսցէ Տէր 'ի վերայ մեր ողորմութիւն քո, և բան փրկութեան քո պահեսցէ զանձինս մեր 'ի մեղաց։

Ողորմութիւն քո և ճշմարտութիւն քո և լոյս երեսաց քոց առաջնորդեսցէ մեզ 'ի յարդարութիւն։

Որ ողորմածդ ես գթած և երկայնամիտ Տէր, ընկալ զաղաչանս մեր բարեխօսութեամբ սուրբ աստուածածնին։

Տէր ըզլուր միւսանգամ քո գալստեանդ լուայ և երկեայ. զի ուսայ 'ի սրբոց պատուիրանացն եթէ գաս դու 'ի դատել զերկիր։ ԱԳ

Տէր յիշեցի ըզ չար ըզգործըս իմ և զարհուրեցայ, զի ծանեայ ճշմարտութեամբ զահաւոր և զանաչառ ըզքո դատաստանն։

Տէր յիշեցի և ըզ գութ արարչական սիրոյ քո առ քո արարածս. և 'ի քո գըթութիւնդ ապաւինեալ աղաչեմ, ողորմեա ինձ յաւուր յայնմիկ քրիստոս արդար դատաւոր։

Որ պատուիրան ճըշմարտութեան աւանդեցեր Եկեղեցւոյ քո քրիստոս, անսահման ժամանակաւ աղօթել մինչ առ Աստուած հոգւով և մտօք։ ԱՃ

Որ ըզբան քո օրինաց հաստատեցեր գործով մեզ օրինակ. հանելով ըզ գիշերըն 'ի գլուխ յաղօթսն առտուծոյ բնութեամբ մերով

տնօրինաբար, որով կրկնի ծնունդ ամենայն:

Վասն որոյ և մեք պաշտեսցուք առ քեզ քրիստոս. շնորհեա մեզ յամենայն ժամ լինել քեզ յանդիման, մաքուր աղօթիւք ըստ անմարմնոյն որ յերկինս:

ԱՒԳ Իմաստուն կուսանքն պատրաստեալ իւղ լապտերաց, ելին ընդ առաջ երկնաւոր փեսային վառեալ լապտերօք:

Իսկ յիմարագն կուսիցն ունայնացեալք ի յիւղոյն, անպատրաստ գտան գալստեան փեսային շիջեալ լապտերօք:

Վասն որոյ և մեք պատրաստեսցուք իւղ հոգևոր, զի մտցուք ի յառագաստ անմահ փեսային վառեալ լապտերօք:

ՑՐ. Օրհնութիւն ի բարձունս տնօրինեցելոյն ի կուսէն Թագաւորին մերոյ. ալէլուիա ալէլուիա:

Օրհնութիւն ի բարձունս անսասանելի և հաստատուն յաւիտեան մերոյ. ալէ:

Օրհնութիւն ի բարձունս անքննելի և միածնական սուրբ երրորդութեանըն. ալէ:

Որ զխաբեական յաշտարակին բաժանմամբ լեզուացըն քակեաց. այսօր ըզբաժանեալ լեզուս ազգաց միաբանեաց դարձեալ ի սուրբ վերնատունն. ամենայն հոգիք օրհնեցէք ըզհոգին աստուծոյ: ՀԳ

Որ էջ հոգին տեառն և առաջնորդեաց երկոտասան ցեղիցն նորայելի ի յանապատին. այսօր երկոտասան առաքելոցն առաջնորդէ ի յաւետարանն. ամենայն:

Որ ելից հոգին տեառն ըզբեսելիէլ ճարտարապետ խորանին. այսօր շինէ ըզմարդիկ խորան սուրբ երրորդութեանն. ամենայն:

Ուրախ լեր մայր լուսոյ մարիամ, երկիր բանաւոր արեգական օթարան. լեր բարեխօս վասն անձանց մերոց: ԱԾ.

Խընդա՛ տաճա՛ր բանի՛ն աս-տուծոյ. բարձո՛ղ տրտմու-թեա՛ն նախամօրն Եւայի. լեր բա՛ւ:

Ցընծա՛ իմա՛նալի արեւելք. քա՛նզի քեւ ծագեա՛ց մեզ լո՛յս երեւաց քրիստոս. լեր բարեխօս:

Որ գերամբո՛յն փառօք պայծառացո՛յց զադամն ա-ռաջին, զոր ճաշակմամբ պըտղոյն մերկացա՛ւ ըզփա՛-ռըս անպատումս. այսօ՛ր վերստի՛ն փառօք զա՛րդա-րեա՛ց:

Որ 'ի նա՛խնումն երեւեալ մովսէսի ամպովքն 'ի սինա. այսօր լուսա՛ւոր ամպովք 'ի թաբօր յայտնեալ վկա-յեաց, դա՛ է ո՛րդի՛ գըլխ լուսաւորք:

Որ 'ի յե՛րկինս վերա՛նցեալ հրեղէ՛ն կառօ՛ք զհեղիաս, այսօր վարդապետեալ 'ի Թա-բօր հանդե՛րձ մովսեսիւ, խօսէին զե՛լի՛ցն որ յերու-սաղէ՛մ:

Փառք հօր և որդւոյ և:

Աղաղակէր աստուածայի՛ն բարբառովքն տէր յիսու՛ս 'ի խաչին. և ընդդէմ աստե-ղաց կըրկէր հրամցեալ աս-տուա՛ծային սուրբ ձեռօ-քըն. և բարկութեամբ զար-թուցեա՛լ 'ի վերայ խաւա՛-րասէր իշխանի՛:

Այժմ և միշտ և:

Յորժամ յարեւելից փայ-լէր անձառ լուսովն լուսաւո-րեա զհամաստեղծեալսն. և դաստապարտես զազգն հրէ-ից անհաւատից ով սուրբ քառաթեւ. և զիս լու-սաւորեա ըզխաւարեալս մեղօք. և դասակարգեա 'ի դասս մատենագրի յանձառ երկնից արքայութեանդ. զի անդադար օրհնաբանես և քո են փառք յաւիտեա՛-նըս ամէ՛ն:

Այս Անձն իմ 'ի ձեռս քո է: Քարոզ. Աղօթք. Զաւետարանն ընթեռնու Ս. Պատրիարքն եթէ պատարագիչ իցէ:

Զկնի փառք քեզ տէր աստուածին, ասի Տէր ե-թէ զշրթունս. Տէր զի բազում: Օրհնեցայք. Զարթուցեալքս. Առաւօտ լուսոյ: Զքեն գո-հանամքն. Ժողովուրդք արձակին, և ասի մի կա-նոն Սաղմոս որում և կցեն զաւագ օրհնութիւնն ՛քաղէլով. ապա օրհնեալք եղիցուք:

Իսկ զկնի առաւօտու ժամուն՝ վերջաւորին երթան անդ 'ի Փրկիչ առ 'ի մատուցանել զհանդիսաւոր սուրբ պատարագն. և յետ սուրբ պատարագին, անդաստան, և ապա աւր Հանգստեան.

## ԿԱՆՈՆ
### ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԴԻ

Ի շաբաթի երեկոյին գնան 'ի Ս. Հրեշտակապետ եկեղեցին ուր կատարեն զժամերգութիւնն, զկնի Հայր գթածին նախատօնակ լինի՝ Տէ. Սնծահրաշ այս խորհուրդ, իւր սարօքն. Այնպէս և առաւօտեան ժամերգութիւնն անդ կատարի, և Ս. պատարագն 'ի յաւագ խորանն.

Այնպէս և 'ի Յարութեն յառաջին կիւրակէ երեկոյին, որ նախատօնակ Հախախմեանցն է, գնան 'ի Ս. Հրեշտակապետի վանն. Ընծայինք նուիրեալք իւր սարօքն. կատարի անդէն և ժամերգութիւնն առաւօտեան. և Ս. պատարագն մատչի անդ 'ի Հախախմեանց խորանն.

## ԿԱՆՈՆ
### Ի ՏՕՆԻ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԵԿԵՂԵՑՒՈՅ

Շաբաթ երեկոյին զոյգ կոչնակ. զկնի Հայր գթածին 'ի ծունկս անկեալ Տէր ողորմեա.

Ի ճաշուն՝ եւս զոյգ կոչնակ.

## ԿԱՆՈՆ
### Ի ՏՕՆԻ ՏԱՊԱՆԱԿԻ

Յուրբաթ երեկոյին 'ի սուրբ Էջմիածին նախատօնակ լինի, շարական աջ, Ըզքեզ քաղաք աստուծոյ, իւր սարօքն.

## ԿԱՆՈՆ
### ՎԱՐԴԱՎԱՌԻ

Ի շաբաթ երեկոյին՝ զոյգ կոչնակ. պատրաստին 'ի գաւիթ Եկեղեցւոյն և հրաշափառաւ մտանեն 'ի ներքս որպէս 'ի Զատկի կիւրակէ երեկոյին.

ԹԷ. յէրէ. 19.

Յայսմ երեկոյիս կէս եկեսցէի ժամերգութեան հսկումն լինի 'ի Սուրբ Յակովբ. որպէս 'ի շաբաթ երեկոյին Հոգեգալստեան.

ԹԷ. յէրէ. 29.

Զկնի հայր գթածին, 'ի ծունկս անկեալ Տէր ողորմեա. Քարոզ՝ Խնդրեսցուք. Կեցո՛ Աղօթք՝ Թագաւոր խաղաղութեան. Ապա նախատօնակ առնեն վասն Յակովբայ տեառնեղբօր առաքելոյն, բատ որում 'ի սոյն աւուր նստաւ յաթոռն սուրբ Երուսաղէմի. շարական տջ. Յաղթող գլուաւ, իւր սարօքն. Մաղթանք, Քրիստոս աստուած մեր. Քարոզ՝ Սուրբ ձգնաւորօքն. Աղօթք՝ Որ ընտրեցեր. Եւ յետոյ զՍ. Պատրիարքն տանին 'ի վեհարանն ասելով շարական տջ, Որ 'ի լերինն. Այնպէս և յառաւօտուն՝ յաւարտ սուրբ պատարագին.

## ԿԱՆՈՆ

### ՎԵՐԱՓՈԽՄԱՆ

Յուրբաթ երեկոյին 'ի սուրբ Էջմիածին նախատօնակ լինի՝ շարական.

Գ.Ձ Ուրախ լեր սուրբ եկեղեցի. (խոր տօրն)։

Ի շաբաթ երեկոյին գնան 'ի սուրբ Աստուածածին, և զԱ. Պատրիարքն հանդիսիւ իջուցանեն 'ի սուրբ գերեզմանն ասելով շարական։

Գ.Ձ Հրաշափառ աստուած. տես. յերես 19։

Եւ համբուրել 'ի տապար ստնդխոցն ասացեն շարական։

Գ.Ձ Ուրախ լեր սուրբ եկե. տես. յերես 20։

Եւ ապա սաղմոս. Ուրախ եղէ. յերես 21։ Եւ յետոյ պաշտեն զերեկոյեան ժամերգութիւնն. ոմանք դառնան 'ի սբ Յակոբ, և ոմանք 'ի գիշերի անդ կատարեսցեն զպաշտօն ժամերգութեն հսկմամբ.

Եւ զկնի առաւօտեան ժամերգութեն վերստին երթան անդ 'ի սուրբ Աստուածածին. և զհանդիսաւոր սուրբ պատարագն մատուցանեն 'ի վերայ սրովբէասպաս գերեզմանի սուրբ Աստուածածնին. Եւ զկնի պատարագին անդաստան արասցեն.

## ԿԱՆՈՆ

### ՎԵՐԱՑՄԱՆ ԿԵՆՍԱՏՈՒ ՍՈՒՐԲ ԽԱՉԻՆ

Յաւուր շաբաթու նաւակատեաց սրբոյ խաչին, յառաջ քան զերեկոյի ժամն. Նախ լուսարարն դնէ արծաթեաւ պատուանդանաւ զսուրբ խաչն, որ ունի զմասն 'ի խաչափայտէն 'ի սուրբ Գլխադիրն, և զարդարէ զնա ռեհանով. և ծածկէ պատուական կտաւով. և զկնի երեկոյեան ժամուն, շուրջառով, խնկօք, և մոմեղինօք՝ 'ի սուրբ Գլխադիրն պատրաստին երթալ։

Սարկաւագն. Եւ ես խաղաղութեան. Հայրապետն. Օրհնութիւն և փառք

Եւ երթան 'ի սուրբ Գլխադիրն պար առեալ յաջմէ եւ յահեկէ, դրան շարադաս՝ ասելով շարական։

Օրհնութիւն սուրբ խաչի քո Քրիստոս. որ կանգնեցեր 'ի փրկութիւն աշխարհի. սա՝ պահեսցէ զմեզ յամենայն փորձանաց. Գ.Ձ
Քանզի 'ի սմա բարձրացար աստուած. և 'ի սմա հեղեր զպատուական սուրբ զարիւնդ. սա՝ պահեսցէ։
Եւ զքո միանգամ զգալուստ նշանաւ խաչի քո ցուցեր աշխարհի. սա՝

Զ.ԲԲ [illegible] ։

Նշանակեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց և ետուր ուրախութիւն սրտից մերոց ։

Եւ Հայրապետն ընթեռնու ։

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի. որ ըստ Յովհաննու ։

[illegible] չարչարանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

Եւ նոքա առեալ տանէին զնա. և բարձեալ էր ինքնին զխաչափայտն. և ելանէր 'ի տեղին՝ որ անուանեալ էր Գագաթն. և կոչիւր եբրայեցերէն Գողգոթայ։ Ուր և 'ի խաչ հանին զնա. և ընդ նմա երկուս ևս այլս աստի և անտի, և 'ի միջի զՅիսուս ։ Գրեաց և տախտակ մի Պիղատոս, և եդ 'ի խաչին. և էր գրեալ Յիսուս Նազովրեցի Թագաւոր Հրէից ։ Զայն տախտակ ընթերցան բազումք 'ի Հրէից. զի մօտ էր 'ի քաղաք անդր տեղին ուր խաչեցաւն Յիսուս. և էր գրեալ եբրայեցերէն, դաղմատերէն, և յունարէն։ Ասեն ցՊիղատոս քահանայապետքն Հրէից. մի՛ գրեր Թագաւոր Հրէից. այլ թէ նա ասաց՝ Թագաւոր եմ Հրէից ։

Պատասխանի ետ Պիղատոս. զոր ինչ գրեցի գրեցի ։

Սարկաւագն քարոզէ ։

Աղաչեսցուք զկենդանատու փրկիչն մեր Քրիստոս որ կամաւոր խաչելութեամբն իւրով զարարածս փրկեաց և հեղմամբ արեանն իւրոյ ըզթողութիւն շնորհեաց յանցաւորաց իւրոց ։ Ամենակալ տէր աստուած մեր կեցո՛ և ողորմեա ։

Աղօթք ։

Ընկեալ առաջի քո բարերար և բազումողորմ Աստուած, աղաչեմք ամենայն սրտիւք մերովք և խնդրեմք զգթութիւն 'ի քէն. որպէս խոստացար ծառայից քոց և ասացեր. զամ զոր ինչ խնդրիցէք հաւատով յանուն որդւոյ 'ի Հօրէ տացի ձեզ։ Շնորհեա՛ և այժմ հաւատացելոցս 'ի քեզ՝ և կատարեա՛ 'ի բարի զխնդրուածս մեր. զի 'ի քեզ եմք ապաւինեալ։ Եւ քո առատ ողորմութեամբդ մխիթարեա՛ զմեզ 'ի կեանս յայսմիկ. և առաջնորդեալ հասո՛ յանձառ յերկնից արքայութիւնդ 'ի փառաւո-

նութիւն և 'ի պատիւ ամենասուրբ երրորդութեանդ. այժմ և միշտ ։

Ժամամուտ ։

Առաջի պատուական ամենայաղթ խաչի քո անկանիմք երկրպագելով և խնդրեմք զթողութիւն յանցանաց մերոց. քանզի սովաւ բարձեր զդատապարտութիւն ազգի մարդկան։ Եւ այժմ մաւրն սրբոյ աստուածածնին քոյ նշանի շնորհեա զերկնային զխաղաղութիւնդ ամենայն աշխարհի ։

Ապա բառնայ հայրապետն բարձրաւ զխաչ ղասուք խաչն, և տարեալ յաւագ խորանն դնէ 'ի սուրբ Սեղանն 'ի վերայ պատուանդանին՝ 'ի գնալն առ նա շարականն ։

Ա.կ Նշանաւ ամենայաղթ խաչիւդ քո քրիստոս պահպանեա զմեզ մարդասէր յաներեւոյթ թշնամեաց. զի դու միայն ես թագաւոր փառաց օրհնեալ յաւիտեան ։

Որ 'ի վերայ սորա տարածեցեր զանարատ բազուկս քո. և հեղեր զարիւնդ 'ի փրկութիւն տիեզերաց. զի դու ։

Ի միւսանգամ քո գալըստեանն յերեւիլ սուրբ նշանիս, արժանի արա ըզծառայս քո վերստին նորոգման. զի դու միայն ։

(Ի բաց ընթերցցին .)

Օրհնի .

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի .

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ .

Զի որպէս փայլակն որ ելանէ յարեւելից և երեւի մինչեւ յարեւմուտս, այնպէս եղիցի գալուստ որդւոյ մարդոյ ։

Զի ուր գէշն իցէ, անդ ժողովեսցին արծուիք ։

Վաղվաղակի յետ նեղութեանցն այնոցիկ արեգակըն խաւարեսցի, և լուսինն ոչ տացէ զլոյս իւր, և աստեղք անկցին յերկնից, և զօրութիւնք երկնից շարժեսցին։

Եւ ապա երեւեսցի նշան որդւոյ մարդոյ յերկինս. և յայնժամ կոծեսցին ամենայն ազգք երկրի և տեսցեն զորդի մարդոյ եկեալ 'ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ և փառօք բազմօք .

Եւ առաքեսցէ զհրեշտակս
իւր փողով մեծաւ. եւ ժո-
ղովեսցեն զընտրեալս նորա
'ի չորից հողմոց՝ 'ի ծագաց
երկնից մինչեւ 'ի ծագս նոցա։
Ի թզենւոյ անտի ուսարուք
զառակն. զի յորժամ նո-
րա ոստքն կակղասցին, եւ
տերեւն ցցուիցի, գիտէք
թէ մերձ է ամառն։
Նոյնպէս եւ դուք յորժամ
տեսանիցէք զայս ամենայն,
գիտասջիք թէ մերձ է առ
դուրս։
Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ
անցցէ ազգս այս՝ մինչեւ
այս ամենայն եղիցի։
Երկինք եւ երկիր անցցեն. եւ
բանք իմ մի՛ անցցեն։

Քարոզ. Սուրբ խաչիւ. Աղօթք. Պահպանեա. Ապա Սարկաւագն. Եւ եւս խաղաղութեան։ Հայրապետն՝ Օրհնութիւն եւ փառք Հօր եւ. Եւ գնան չոր 'ի չոր առաջի Սրբոյն Պատրիարքին 'ի Պատրիարքարան՝ ասելով շարական։

ԱՁ Որ զանսպառ բաժակս քո. Տես յէջս 26։

Սուրբ խաչիւ. Պահպանիչ. Եւ արձակումն։

---

Կիրակէի. նախ քան զերեկոյեան ժամերգութիւնն. դպրապետք Պատրիարքն. եւ վարդապետք չոր ջոկով գաւազանորդեալ երթան յաւագ խորանն՝ ասելով շարական։

ԳՁ Որ ծագեցեր մեզ լոյս մեծ
ընդ ընչան յաղթութեան խա-
չի քո Թագաւոր յաւի-
տենից. եւ նորա պարգեւ
ամբողջութեան հաւատացե-
լոց քոց, աշտարակ հզօր
յերեսաց թշնամւոյն. ա-
ղաչեմք զքեզ Տէր պահ-
պանեա զմեզ ընդ հովա-
նեաւ խաչի քո սուրբ։
Սպասեալ զարդարեալ 'ի շը-
նորհաց իմանալի լուսովն, եւ
եդեալ 'ի գլուխ մեղուցե-
լոյն, վայելուչ երանգօրներ-
կեալ արեամբ եւ ջրով 'ի տէ-
գանոց կողէդ զոր 'ի զենմա-
ւորէն ընկալար. ամա։
Որ զանդունդս մեղաց ծո-
վուն ստուեր բաժանեցեր,
եւ զզօրաւորն ծածկե-
ցեր խորովքն յաւիտենա-
կան հրով. հաներ ըզժո-
ղովուրդս քո 'ի բնակութիւն
Երկնից անկեալ զօրացն.
ամա։

Ապա Խնկարկէ Հայրապետն եւ ընթեռնու զԱղօթս

Տէր աստուած մեր՝ որ կար-
գեցեր յերկինս դասս եւ
զզինուորութիւնս հրեշ-
տակաց եւ հրեշտակապե-
տաց, 'ի սպասաւորութիւն
փառաց քոց. Արա այժմ

ընդ մուտս մեր մտանել և ոգւոց հրեշտակաց. և լինել պաշտօնակից մեզ և փառաբանակից քում բարերարութեանդ.

Սաղմ. Բարձր արարէք զՏէր Աստուած մեր. երկիրպագէք պատուանդանի ոտից նորա, զի սուրբ է.

Պօղոսի առաքելոյն 'ի կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս.

Զի բան խաչին կորուսելոցն յիմարութիւն է, այլ փրկելոցս մեզ՝ զօրութիւն Աստուծոյ։
Զի գրեալ է, կորուսից զիմաստութիւն իմաստնոց, և զխորհուրդս խորհրդականաց արհամարհեցից։
Ո՞ւր իմաստունն, ո՞ւր դպիր, ո՞ւր քննիչ աշխարհիս այսորիկ. ո՞չ ապաքէն յիմարեցոյց Աստուած զիմաստութիւն աշխարհիս այսորիկ։
Քանզի իշխանութեամբն Աստուծոյ ո՛չ ծանեաւ աշխարհ իմաստութեն զԱստուած. այլ հաճեցաւ Աստուած՝ յիմարութեամբ քարոզութեանն՝ ապրեցուցանել զհաւատացեալս։
Խոկ որովհետև Հրեայք ըզնշան հայցեն. և հեթանոսք զիմաստութիւն խնդրեն. մեք քարոզեսցուք զխաչելեալն Քրիստոս, Հրէից գայթակղութիւն. և հեթանոսաց յիմարութիւն.
Բայց նոցին իսկ կոչեցելոյն Հրէից և հեթանոսաց՝ ըզՔրիստոս, Աստուծոյ զօրութիւն և Աստուծոյ իմաստութիւն։

Ալէլուիա. ալէլուիա.
Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց, և ետուր ուրախութիւն սրտից մերոց։

Ողթի.
Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու.

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Հայր, փառաւորեա զորդի քո։ Եկն բարբառ յերկնից. և փառաւոր արարի, դարձեալ փառաւոր արարից։ Եւ ժողովուրդն որ կայր և լսէր՝ ասէին որոտումն լինել։ Այլքն ասէին, հրեշտակ խօսեցաւ ընդ նմա։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ. ոչ վասն իմ ինչ եկն բարբառս այս, այլ վասն ձեր։ Այժմիկ դատաստան է աշխարհիս այսորիկ. այժմիկ իշխան աշխարհիս այսորիկ ընկեսցի արտաքս։

Եւ ես յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսին ձգեցից առ իս։
Զայս ասէր՝ նշանակելով թէ որով մահու մեռանելոց իցէ։

Ձայն Սուրբ Աստուած · Սուրբ Աստուած · Սուրբ Աստուած · Սուրբ և Հզօր · Սուրբ և Հզօր · Սուրբ և Հզօր · Սուրբ և անմահ · Սուրբ և անմահ · Սուրբ և անմահ · որ խաչեցար վասն մեր ողորմեա մեզ ·

Եւ հայրապետն խնկարկելով բարձցէ զսուրբ խաչն ամենեւին. և երթեալ 'ի կողմն Արեւմտեան յանդիման Արեւելից յաջմէ և յահեկէ մ.ծ գերման գաւթին, որպէս ասել շարագաս կանգնին. ասելով շարական.

Գ.Կ Այսօր երեւեցաւ մեծի ճառագայթիւ նշանն տեառն Աստուծոյ մերոյ փայլելով 'ի նաւակատիսն որ յԵրուսաղէմ. Ժողովուրդք բարեբանելով զՔրիստոս տօնեցէք ուրախութեամբ։ Քանզի նշանաւ մ.ք կենսատու սուրբ խաչին արեգակնակերպ փայլմամբըն թափանցեցին լուսովն 'ի յարեւելից յայտնեալ. Ժողո։
Ի յերկնից ցոլացեալ ահեղ և նորանշան հրաշիւք ցուցանէ առ սուրբ Գողգոթայ, նշանն աւետարանական. Ժողո.

Որթն.
Սրբոյ Աւետարանին Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու.

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Եւ ոչ ոք ել յերկինս, եթէ ոչ որ էջն յերկնից Որդին մարդոյ, որ էն յերկինս. Եւ որպէս Մովսէս բարձրացոյց զօձն յանապատի, նոյնպէս բարձրանալ պարտ է Որդւոյ մարդոյ։
Զի ամենայն, որ հաւատայ 'ի նա՝ ոչ կորիցէ. այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս։
Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ՝ մինչեւ զՈրդին իւր միածին ետ. զի ամենայն որ հաւատայ 'ի նա, մի կորիցէ, այլ ընկալցի զկեանս յաւիտենականս։
Զի ոչ առաքեաց Աստուած զՈրդի իւր յաշխարհ՝ թէ դատեսցի զաշխարհ, այլ փրկեսցի աշխարհ նովաւ։
Որ հաւատայ 'ի նա, ոչ դատապարտեսցի. և որ ոչն հաւատայ 'ի նա, արդէն իսկ դատապարտեալ է. զի ոչ հաւատաց յանուն միածնի Որդւոյն Աստուծոյ։
Եւ այս իսկ է դատաստան. զի լոյս եկն յաշխարհ՝ և

տիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զլոյս. զի էին գործք իւրեանց չարութեան։ Զի ամենայն որ զչար գործէ՝ ատեայ զլոյս. և ոչ գայ առ լոյսն, զի մի յանդիմանեսցին գործք նորա։

Իսկ որ առնէ զճշմարտութիւն՝ գայ առ լոյսն, զի յայտնի լիցին գործք նորա, թէ աստուծով գործեցան։

Սարկաւագն քարոզէ.

Վասն Հայրապետին մերոյ Տեառն (այս անուն) Սրբազան կաթուղիկոսի, և սրբոյ Աթոռոյս Պատրիարքի Տեառն (այս անուն) Արք Եպիսկոպոսի. և վասն ամենայն պանծալի Եպիսկոպոսաց, Աստուածաբան վարդապետաց, երախտաւոր Նուիրակաց, պատուական Քահանայից, մաքրասուն Սարկաւագաց, քաղցրանուագ Դպրաց, աշխատաւոր Միաբանից, վաստակաւոր Աշակաց, և ընդհանուր ամ Մանկանց Եկեղեցւոյ, զտէր աղաչեսցուք։

Եւ ասասցէ Հայրապետն քառասուն Տէր ողորմեա.

ՍՐԿ Օրհնեա՛ տէր։

Եւ Հայրապետն բարձրացուցեալ զսուրբ խաչն՝ տեառնագրեսցէ ասելով.

Օրհնեսցի և պահպանեսցի, և նախախնամեսցի պահեսցի Արևելեան կողմն աշխարհիս, քահանայապետութիւն կաթուղիկէ և Առաքելական Եկեղեցւոյ Հայաստանեայց, և Վարդապետական իշխանութիւնս, Քահանայք, Սարկաւագք, Դպիրք, և սրբոյ Աթոռոյս աշխատաւորք, և ամ ուխտիս լրմամբ՝ սրբութեամբ պաշտել զՀաւատս անբիծս. Այս Նշանաւ սուրբ խաչիւս և սուրբ Աւետարանաւս, և աւուրս շնորհիւ. անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Զկնի Սուրբ Աստուած բառ վերոյ գրեցելոյն. երթան ի կողմն Արևելից. յառաջն առաջի բեմին պար առեալ յաջմէ և յահեկէ դառնալով ասելով շարականն.

Որ զմնարաստ բարձուկրս. ԱԶ

տես. յերես 26։

Ողթի.

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի.

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Զի որպէս փայլակն որ ելանէ յարևելից և երևի մինչև յարևմուտս, այնպէս եղիցի գալուստն Որդւոյ մարդոյ։

Զի ուր գէշն իցէ, անդ ժողովեսցին արծուիք։

Վաղվաղակի յետ նեղութեան աւուրցն այնոցիկ արեգակն խաւարեսցի. եւ լուսինն ոչ տացէ զլոյս իւր, եւ աստեղք անկցին յերկնից, եւ զօրութիւնք երկնից շարժեսցին։

Եւ ապա երեւեսցի նշան Որդւոյ մարդոյ յերկինս. եւ յայնժամ կոծեսցին ամենայն ազգք երկրի եւ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ՚ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ եւ փառօք բազմօք։

Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ. եւ ժողովեսցեն զընտրեալս նորա ՚ի չորից հողմոց՝ ՚ի ծագաց երկնից մինչեւ ՚ի ծագս նոցա։

Ի թզենւոյ անտի ուսարուք զառակն. զի յորժամ նորա ոստքն կակղասցին, եւ տերեւն ցցուիցի, գիտէք թէ մերձ է ամառն.

Նոյնպէս եւ դուք յորժամ տեսանիցէք զայս ամենայն գիտասջիք թէ մերձ է առ դուրս։

Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս այս՝ մինչեւ այս ամենայն եղիցի.

Երկինք եւ երկիր անցցեն. եւ բանք իմ մի անցցեն։

Սարկաւագն քարոզէսցէ.

Վասն պայծառութեան քրիստոնէից՝ եւ սրբոյ հաւատոյս մերոյ Լուսաւորչին, եւ զբանաւոր բարեպաշտ իշխանացն մերոց յամ գործս բարեաց, պահելով զնոսա՝ եւ զորդիս նոցա ընդ հովանեաւ զօրութեան սրբոյ խաչիս, եւ Առաքելական սրբոյ Աթոռոյս հաստատութեան եւ պայծառութեան եւ յամենայն նեղութեանց ազատութեան, եւ եղբայրութեանս մերոյ անքակտելի սիրով միաբանութեան, զտէր աղաչեսցուք։

Եւ տասցէ Հայրապետն քառասուն Տէր ողորմեա

Օրհնեա տէր. Սրկ

Եւ Հայրապետն բարձրացուցանէ զսուրբ խաչն՝ տեառնագրէ ասելով.

Օրհնեսցի եւ պահպանեսցի, եւ նախախնամեալ պահեսցի Արեւմտեան կողմն աշխարհիս, եւ թագաւորութիւն, երկիր, եւ ամենայն ժողովուրդ քրիստոնէից. այս նշանաւ սուրբ խաչիս եւ սուրբ աւետարանաւս եւ աւուրս շնորհիւ, անուամբ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն.

Զկնի՝ Սուրբ Աստուած. ըստ մերոյ գրեցելոյն. երթան 'ի կողմն Հիւսիսոյ. յաջմէ և յահեկէ դրան սուրբ Ստեփաննոսի դասադաս կանգնին՝ ասելով շարական ։

Գշ Փայտ կենաց որ փոխանակ մահացու պտղոյն ըզքրիստոս պտղաբերեցեր. պարսպեալ պահեա զուխտս հաւատացելոց։

Քեւ բացաւ մեզ ճանապարհ ծառոյն կենաց 'ի սերովբէափակ պահպանութենէն. պարըս։

Քեւ ազատեցաւ նախահայրն 'ի ճաշակմանէ պտղոյն. և քեզ երկրպագեն ամենայն հաւատացեալք, պարսպեալ պա։

Որթի .

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մարկոսի .

Վասն չարչարանաց տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի .

Եւ վաղվաղակի ընդ առաւօտն խորհուրդ արարեալ քահանայապետիցն հանդերձ ծերովքն և դպրօք՝ և ամենայն ատեանն, կապեցին զՅիսուս, և տարան մատնեցին Պիղատոսի։ Եհարց զնա Պիղատոս և ասէ. դու ես Թագաւորն Հրէից. նա պատասխանի ետ նմա և ասէ՝ դու ասես։ Եւ չարախօսէին զնմանէ յոյժ քահանայապետքն. և նա ոչինչ տայր պատասխանի։ Իսկ Պիղատոս դարձեալ հարցանէր զնա. ոչինչ տաս պատասխանի. տե՛ս՝ քանի ամբաստանեն զքէն։ Եւ Յիսուս այնուհետեւ ոչինչ ետ պատասխանի. մինչեւ զարմանալ յոյժ Պիղատոսի։ Բայց ըստ տօնի արձակէր նոցա զմի որ կապեալ. զոր ինքեանք խնդրէին. Եւ էր՝ որում անուն էր Բարաբբաս՝ կապեալ ընդ խռովիչսն, որոյ ընդ խռովելն՝ զայր մի սպանեալ էր։ Ի ձայն բարձր սկսաւ աղաղակել ամբոխն և խնդրել՝ որպէս սովոր էր. զի արձակեսցէ նոցա զԲարաբբայն. Պատասխանի ետ Պիղատոս և ասէ ցնոսա. կամիք՝ զի արձակեցից ձեզ զարքայն Հրէից։ Քանզի գիտէր թէ առ նախանձու մատնեցին զնա քահանայապետքն։

Որք և զամբոխն հաւանե-
ցուցին՝ զի արձակեսցէ նո-
ցա զԲարաբբայն ։
Դարձեալ պատասխանի ետ
Պիղատոս եւ ասէ ցնոսա .
իսկ զի՞նչ կամիք Թէ արա-
րից զորքայն Հրէից ։
Եւ նոքա դարձեալ աղա-
ղակէին՝ յուզեալք 'ի քա-
հանայապետացն , 'ի խաչ
հան զդա ։
Ասէ ցնոսա Պիղատոս . զի՞նչ
չար արարեալ իցէ դորա .
և նոքա առաւել եւս ա-
ղաղակէին եւ ասէին . 'ի
խաչ հան զդա ։
Իսկ Պիղատոս իբրեւ զկամս
կամեցաւ հաճել զամբո-
խին, արձակեաց նոցա զԲ-
Բարաբբայն . եւ զՅիսուս
գան հարեալ ետ 'ի ձեռս ,
զի 'ի խաչ ելանիցէ ։

Սարկ—ագն քարոզէ ։

Վասն երկրիս անդաստա-
նաց , այգեաց եւ այլոց
պտղաբերից , զՏէր աղա-
չեսցուք ։

Եւ ասասցէ Հայրապետն քառասուն Տէր ողորմեա

ՍՐԿ Օրհնեա՛ տէ՛ր ։

Եւ Հայրապետն բարձրաձայն զսուրբ խաչն՝ առանձնաբար ասելով ։

Օրհնեսցի և պահպանե-
ցի և նախախնամեալ պա-
հեսցի Հօրաւային կողմն
աշխարհիս , երկիրս , ան-
դաստանս , այգիս և պտղա-
բերութիւք սոցա , զի փըր-
կեսցին յամենայն վնասա-
տու պատահմանց , և լցին
առատաբերք . այս նշանաւ
սուրբ խաչիւս եւ սուրբ
աւետարանաւս և աւուրս
շնորհիւ , անուամբ Հօր և
Որդւոյ և Հոգւոյն սրբոյ ,
այժմ և միշտ և յաւիտեա-
նըս յաւիտենից ։

Զկնի Սուրբ Աստուած , ըստ միոյ գրեցելոյն .
և փոխեսցեն 'ի ստեղն Հօրաւոյ՝ ասելով շարականն ։

Խաչըն կենարար որ եղեւ ԲԿ
մեզ փրկութիւն . ալէլուիա
ամենեքեան ըզքեզ բա-
րեբանեմք ։
Որ 'ի Հօրէ լուսոյ լոյս ճա-
ռագայթեալ 'ի յերկրի ,
և գաւազան զօրութեան
ւատաչելոց . ալէլուիա ։
Որ լուսաւորեալ ծագմամբ Հը-
րաշափառապէս մեզ ցու-

ցու ՚ի յօգնութիւն ընդդէմ թշնամւոյն. ամէն։

Ութիւ.

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու.

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Մի խռովեսցին սիրտք ձեր. այլ հաւատայէք յԱստուած, եւ յիս հաւատայէք։

Ի տան Հօր իմոյ օթեւանք բազում են. ապա թէ ոչ՝ ասացեալ էր իմ ձեզ. թէ երթամ, եւ պատրաստեմ ձեզ տեղի։

Եւ եթէ երթամ եւ պատրաստեմ ձեզ տեղի, դարձեալ գամ, եւ առնում զձեզ առ իս. զի ուր եմ ես, եւ դուք անդ լիջիք։

Եւ ուր երթամն՝ գիտիցէք. եւ զճանապարհն գիտիցէք։

Ասէ Թովմաս. Տէր՝ ո՛չ գիտեմք, յո՞ երթաս. եւ զիա՞րդ զճանապարհն կարասցուք գիտել։

Ասէ ցնա Յիսուս. Ես եմ ճանապարհ եւ ճշմարտութիւն եւ կեանք. ոչ ոք գայ առ Հայր եթէ ոչ ինեւ։

Եթէ զիս գիտէիք՝ ապա եւ զՀայրն իմ՝ գիտէիք. եւ այսուհետեւ գիտասջիք զնա։

Ասէ ցնա Փիլիպպոս. Տէր, ցոյց մեզ զՀայր, եւ շատ է մեզ։

Ասէ ցնա Յիսուս. այսչափ ժամանակս ընդ ձեզ եմ. եւ ո՞չ ծանեար զիս Փիլիպպէ. Որ ետեսն զիս, ետես զՀայրն. եւ դու զիա՞րդ ասես եթէ ցոյց մեզ զՀայր։

Ո՞չ հաւատաս, եթէ ես ՚ի Հայր, եւ Հայր յիս է. զբանս, զոր ես խօսիմ ընդ ձեզ. ոչ եթէ յանձնէ ինչ խօսիմ. այլ Հայրն, որ յիս բնակեալ է՝ նա գործէ զգործսն։

Հաւատայի՞ք ինձ, եթէ ես ՚ի Հայր, եւ Հայր յիս է.

Ապա թէ ոչ՝ վասն գործոցն հաւատացէք ինձ. ամէն ամէն ասեմ ձեզ. թէ որ հաւատայն յիս, զգործսն զոր ես գործեմ, եւ նա գործեսցէ. եւ մեծամեծս եւս քան զնոյնս գործեսցէ. զի ես առ Հայր երթամ։

Եւ զոր ինչ խնդրիցէք յանուն իմ՝ արարից զայն. զի փառաւորեսցի Հայր յՈրդի։

Եթէ զոր ինչ խնդրիցէք յինէն՝ արարից զայն։

Սարկաւագն քարոզէ.

Վասն վանօրէից, անապատաց, և ամենայն եկեղեցեաց մերոց, զՏէր աղաչեսցուք:

Եւ ասասցէ հայրապետն քառասուն Տէր ողորմեա:

ՍՐԿ Օրհնեա՛ Տէր:

Եւ հայրապետն բարձրացուցանէ զսուրբ խաչն՝ տեառնագրէ ասելով.

Օրհնեսցի և պահպանեսցի, և նախախնամեալ պահեսցի Հիւսիսային կողմն աշխարհիս, վանքս, անապատս, և ամենայն եկեղեցիք Հայոց՝ հանդերձ եկեղեցականօք և ժողովրդովք. զի լիցին 'ի շինութեան, 'ի բարեկարգութեան եւ 'ի խաղաղութեան. այս նշանաւ սուրբ խաչիւս եւ սուրբ աւետարանաւս և աւուրս շնորհիւ, անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից: Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ ապա երգիցեն յառաջեան դասակարգն՝ ասելով շարական.

Սուրբ խաչն օգնական հաւատացելոց, կանգնեցաւ 'ի յերկրի յաղթող թշնամեացն. Եկայք ժողովուրդք երկրպագեսցուք: Արարիչն աստուած բարձրացաւ 'ի խաչին, և զմեռեալս մեղօք փայտին ճաշակմամբն, 'ի սմա նորոգեալ կենդանացոյց: Միաբանեալ գովեսցուք աստուածորդւոյն, սուրբ խաչն երեւի և լուսաւորէ, զի նա է յոյս հաւատացելոց: ԱՁ

Եւ հայրապետն դիցէ զսուրբ նշանն 'ի վերայ պատուանդանի իւրոյ, և ասասցեն.

Խաչի քո Քրիստոս երկիր պագանեմք.

Զկնի Սուրբ խաչիւս. Աղօթք՝ Պահպանիչ.
Եւ պաշտօնէյքն զերեկոյեան ժամերգութիւնն.

## ԿԱՆՈՆ

### Ի ՎԱՐԱԳԱՅ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՊԱՀՈՑ ՈՒՐԲԱԹ ԵՐԵԿՈՅԻՆ

Ա.Զ Ըստ նախնի սովորութեան երթան ՚ի սուրբ Գէորգ ՚ի վանս խոյտոյ. և նախատօնակ առնեն. այնպէս և յաւուրս յետ գիշերային ժամերգութեան, գնան անդ ՚ի մատուցանել զսուրբ Պատարագն. և համառօտ ծանուցումն լինի յաղագս տեղւոյն և կամաւոր ողորմութեան։

## ԿԱՆՈՆ

### Ի ՏՕՆԻ ՍՐԲՈՑ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑՆ

Ուրբաթ երեկոյին գնան ՚ի վանս Հրեշտակապետին և նախատօնակ առնեն. գիշերային ժամերգութիւնն անդ կատարի. Աշխարհ ամենայն երգոյն, միոյ տանն երեք ուր ողորմեա յաւագ և երեք յետոյ առեն, և հանդիսաւոր սուրբ պատարագն յաւագ խորանն մատչի։

## ԿԱՆՈՆ

### Ի ՏՕՆԻ ԴԱՒԹԻ ՄԱՐԳԱՐԷԻՆ

Ի նախատօնակի երեկոյին զՍ. Պատրիարքն մեծաւ հանդիսիւ տանին ՚ի սուրբ [illegible]կեղեցին՝ առելով շարական։

Դ.Զ Հրաշափառն աստուած.

Օրհնեալ Հրաշափառն ՚ի Ս. Յակոբ.

գէ. յեղր. 19։

Իսկ յետ ժամերգութեան տանին ՚ի Պատրիարքարանն։

Իսկ յաւուրսն հանդիսաւոր սուրբ Պատարագ մատչի յաւագ խորանն։ Զկնի պատարագին գնան ՚ի Պատրիարքարան առելով շարական՝ Յաղթող գտաւ յօրհնաբանմն։

Այնպէս և ՚ի տօնի Որդւոցն Որոտման. ՚ի նախատօնակի երեկոյին Հրաշափառաւ մածցեն զՍ. Պատրիարքն [illegible]կեղեցին. և զկնի ժամերգութեան գնան ՚ի Պատրիարքարան առելով շարական. Որ էնն յէութն։ Այնպէս և յաւուրսն զկնի հանդիսաւոր Ս. Պատարագ մատչի ՚ի Ս. Գլխադիր, և զկնի Պատարագին հանդիսաւոր Թափօր լինի։

## ԿԱՆՈՆ

### ՅԱՌԱՋԱՒՈՐԱՑ

Յաւուրս Առաջաւորաց. մեծի պահոց, և Աւագ շաբաթու՝ Բշ. Գշ. և Դշ. հանգստեան ոչ լինի։

## ԿԱՆՈՆ

### ՆԱԽԱՏՕՆԱԿԻ ՅԱՅՍՄԱՒՈՐԱՑ

Որ ՚ի տարւոջն երիցս լինի. և այն նախ քան զժամերգութիւնն. զայսմաւուրն Սրբազան Պատրիարքն ընթեռնու. և ապա տան նմա միայն շուրջառ՝ խաչ և գաւազան խնկօք

և մոմեղինօք ելանեն յառեան . իսկ այլ կարգաւորք միայն մոմ 'ի ձեռին պար առեալ դասադաս երգեն բառ պատշաճի .

Առաջին . Ի փետրվարի 21 . Ի սուրբ Գլխադիրն լինի, վասն Որդւոյ Որոտման՝ սրբոյն Յակոբայ մեծի Առաքելոյն, և Յովհաննու աւետարանչին: Շարական, Տէ . Որ էին յէութեան . Իւր աւուրն:

Երկրորդ . Ի Յուլիսի 11 . Ի սուրբ Կարապետի խորանն , վասն ծննդեան սրբոյն Յովհաննու կարապետին՝ շարական , Աէ . Արեգականն արդարութեան . Իւր աւուրն .

Երրորդ . Ի Հոկտեմբերի 23 . Յաւագ խորանն , վասն սրբոյն Յակոբայ տեառնեղբօր Առաքելոյն՝ շարական , Տյ . Յաղթող գաւառ յօրհնաբանեան . Իւր աւուրն .

---

# ԿԱՆՈՆ

## ՀԱՆԴԻՍԻ ԳԼԽԱԴՐԻ

## ՈՐ ԿԱՏԱՐԻ Ի ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈՅՍ

Ի շաբաթէն յորում կատարի տօնախմբութիւն Սրբոյն մեծին Ներսիսի Պարթևի Հայրապետին մերոյ, սկըսանի կատարումն հանդիսի Գլխադրին. մինչ 'ի շաբաթն յորում կատարի տօնախմբութիւն Սահակայ Պարթևի լինի 'ի բաց առեալ զաւերունի շաբաթոյ յարըս ոչ կատարի հանդէս .

Նշանակ հանդիսին .

Օրինի ժամերգութեան առն շաբթու . խոսք և զարդարան Սրբազան Պատրիարքին , և պատրաստին գնալ 'ի դաս գլխադրին . սարկաւագունք և փոխանորդք շապիկս զգեցեալ գնասցեն յառաջս Սրբազան Պատրիարքին . մինչ 'ի յատենին են , ապա աւագ սարկաւագն Նու ևս խաղաղութեան . Ս . Պատրիարքն օրհնութիւն և փառք , և արկանէ խունկ , և գնան առելով շարական , Որ էին յէութեան , կամ Որդիքն որոտման .

Հատեալ առաջի Սրբոյն Գլխադրին , խնկարկէ Սրբազան Պատրիարքն առաջի մասանց և շուրջանակի ժողովրդեան և խորանացն 'ի մէջ դասուց . և ապա գայ 'ի Սուրբ Գլխադիրն և 'ի ծունկս անկեալ առնէ Տէր ողորմեա զասականքն . ապա՝ Սրբազան Պատրիարքն . աղաչեմք ողորմեաց սարկաւագըն՝ Սուրբ Ծննդորքն . Սրբազան Պատրիարքն՝ Որ ընտրեցեր և ընկալար . Դասականք գնան 'ի դաս խորանչիք . Նշխարկապասունք միայն մնան 'ի մեկերի դասն . և պաշտեն դասականք զՀանգստեանն . Ի վերջ Աւետարանին Հանգստեան գնասցէ Սրբազանըն և Նշխարկապասունք . ապա և դասականք հանդերձելով զՎ՛ Եղանակն . Գիտելի սոցա է զի 'ի բուն ձախին դասէն սկսանի միշտ Որ էին յէութեան իսկ Որդիքն որոտմանն սկսանի 'ի կողման դասէն .

Յետ առնելոյ զօրհնութիւնն վեց առն . և հետեւակ շարական ասի . եթէ աւուր տօնի Առաքելոյ իցէ . Իմաստութիւն երկնային իջեալ 'ի վերուստ , եթէ Հայրապետաց իցէ տօնն՝ ասի

հետեւակ շարական. Որ յարմարոց հարցն ոչ ըստ. կամ Արեգակն արդարութեան՝ի Հայաստան ծագեալ պածառացուցեր.

Եթէ մարտիրոսաց իցէ տօնն ասի շարական Երրորդութեանն սիրով.

Այս երեք տուն Աստուածածնայ, և երեք տուն խաչի. փառք.

Յաւուրս Առաքելոց տօնի, խաչի շարականն ասի Որ յանձնկէզն էին. ՚ի հայրապետաց տօնս ասի Էջ միածինն ՚ի հօրէ.

Այժմ և միշտ վերջին տուն Որդւոյ որոտման շարականացն ասի.

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Որ զծաղկեայ զգենուն զփիլոն վարդապետք, զգեցցին միայն ՚ի նշանակեալ աւուրս և ՚ի ժամս.

Ա. Յաւուր կաղանդի յառաւօտուն ժամուն և ելթ.

Բ. Ի ծննդեան աւուրս յերեկոյին՝ ճրագալուցն մինչեւ յերկրորդ աւուր երեկոյն.

Գ. Ի Նախատօնակի Տեառնընդառաջին և յառաւօտուն.

Դ. Ի ծաղկազարդի երեկոյին դրան բացին և ելթ.

Ե. Յոմնալուայի երեկոյին և ելթ.

Զ. Ի Ս. Զատկի կիւրակէ երեկոյէն մինչեւ ցաւուրս համբարձին երկրորդ աւուր զատկի.

Է. Ի տօնի Կաթուղիկէ եկեղեցւոյ շաբաթ երեկոյին եւ յառաւօտուն ցաւուրս պատարագին.

Ը. Ի Վարդավառի շաբաթ երեկոյին և յառաւօտուն ցաւուրս պատարագին.

Թ. Ի վերացման որբոյ խաչի շաբաթ երեկոյին ՚ի նախատօնակին, յառաւօտուն ՚ի պատարագին. յերեկոյին ցաւ աւուր հանգստին.

Ժ. Ի նախատօնակս և ՚ի հանդէսս չորեցունց աւագ տօնիցն. այս է ՚ի Դաւթի մարգարէին, Ստեփաննոսին Պետրոսի և Պօղոսին. և Որդւոցն Որոտման.

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Յամենայն երեկոյս նախ քան զժամերգութիւն հարկանի զանգակ փոքր և ասի մի կանոն Սաղմոս. ՚ի բաց առեալ զյինանց եօթն շաբաթս եւ զերկու շաբաթս Բուն բարեկենդանին յորս ոչ կատարի երեկոյեան սաղմոսերգութիւնս, նա եւս ոչ կատարի յամենայն ՚ի շաբաթս և ՚ի կիւրակէս.

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Սովորութիւն է ՚ի Ս. Աթոռս, զի յամենայն ՚ի շաբաթս յորս համբարձի ասի Սուրբ ես տէր, զինի երեկոյեան ժամերգութեանն ասի հանգստեան.



## ՔԱՐՈԶ.

### Ի ԳԱԼՈՒՍՏ ՍՈՒՐԲ ՀՈԳՒՈՅՆ

Գանձ լուսոյ, փառակից
որդւոյ։ Անճառ զօրութի,
ահեղ մեծութիւն, անբաւ
բնութիւն։ Լոյս 'ի լուսոյ։
Ոգի բարձրելոյ։ Պատկեր
անփոփոխ՝ պարզ անզննելի։
Հաստիչ հոգւոյ՝ հանդեր-
ձիչ մարմնոյ։ Անուն պաշ-
տելի, ճշմարիտ բարի, ա-
նեղծանելի է։ Էակից ընդ
հօր. և տէր բոլորից։ Ահա
ընկալցիս զերկրպագութի
քում դաւանողացս քեզ 'ի
հաճութիւն, աղաչեմք։
Րաբուն հանճարոյ, տեսու-
թեան մերոյ, անթարգմա-
նելի խորոցդ աստուծոյ։ Որ
դու միայն մինդ յիսկութէ
տեսակ առանձին։ Ոգի տի-
րական, ուրոյն կերպարան,
կատարելութեան. յորմէ
գոյացան եղեալքս ամենայն։
Ուստի յօրինակ նորոյ փրկ-
կութեան՝ զնախնի խաւա-
րըն աշխարհատարած ան-
զարդութեան՝ հինն նսեմու-
թեան գեղատխուր ան-
պատրաստութեն՝ փայլչա-
կան հրաշազարդութեամբ՝
շրջմամբ քո 'ի ջուրս՝ բանիւ
բղխողիդ 'ի լոյս փոխեցեր։
Ահա ընկալցիս զեր։
Ի զօրս վերինս փառատրո-
ղացն սրբաբանեալ կազմի-
չըդ ամենից։ Ի կտակս օրի-
նացն և մարգարէիցն՝ ազ-
դումն և պատճառ։ Ի տա-
ռըս իմաստնոցն և քարոզո-
ղացն՝ առաքիչ և տէր։ Շն-
չումն ահաւոր և ձայն կեն-
դանի։ Հանդերձիչ երկնի.
և առ նոյին տիեզերահեղ-
ձոյց ծովուն ցամաքիչ։ Բա-
ժանող շրթանց առաջին
ձայնիցն՝ սնոտիաժողով միա-
բանելոց՝ յայլ հրաւէր նո-
րոգ պանծալի համաբար-
բառ տպաւորութե։ Հողմն
սաստիկ եգիպտակործան,
և ամպ վերարկու տոհմին
յակոբու։ Ուժգին և հան-
դարտ՝ նոյն առ հեղիու։
Պատմաբանիչ հրոյլարտակիօք
քոյինաշուեց պատգամագ-
րութեանցն։ Եւ յապագային
տեսողութի հրամայեցեր
աստուածայնապէս։ Որով
զճանապարհ յաղթողին մա-
հու և բելիարայ, յաւու-
րըս վերջինս այսու ծանու-
ցեր։ Ահա ընկալցիս զեր։
Գովեստ քեզ անեղծ և տէր

անստեղծ։ Ամենիշխան Թա-
գաւոր երկնի։ Ինքնաձեռն
աջ զօրեղութեան մարդա-
ցելոյն աստուծոյ օծումն։
Կերպիւ աղաւնոյ ցուցեալ
'ի յորդանան։ Հաւասարա-
փառ զուգաթիւ ընդ Հօր։
Հրամանատուր գործոյն յի-
սուսի եւ տնօրինականաց
մեծին գուշակումն։ Տե-
սութեան լուսոյ՝ Հովանի
'ի լերինն Թաբօրական՝ ա-
բարչատես ներգործեցելո-
ցըն։ Ի ցոյցս դիմաց, 'ի
ձեւս Հրաշից, 'ի յամպս դա-
րուց, 'ի Հարս նախնեացն։
Առձեռն երեւոյթ տուեալ
զօրինակն՝ Ճշմարտութեան
նշանակ յայտնի։ Կանխա-
գրելոցն կնիք։ Սկզբնատիպ
Թագաւորութեանց օծման
Իւղոյն մաքրութեան՝ սաՀ-
ման և սկիզբն։ Ահա՛ ըն։
Ո՛վ զարմանաւոր և սքանչե-
լապայծառ Հեղեալ 'ի յէէն
բնութիւն անթերի. ան-
Հատ անդուստ՝ եւ այսր
աննուազ։ Բարեբանեալդ
յօրՀնեցելոյն։ Յերեսս բո-
ցոյ բուրելոյ խնկոցն Ճընչ-
մամբ խառնելոյ։ Հիանչմար
մրրիկ աՀարկու, ընտրողա-
կան Հրեղինաց լեզուացն
բազմեալ 'ի պարծանս աշա-
կերտելոցն։ Յաւուրս լու-
սոյ պենտէկոստէին՝ զՀրա-
ճաշակն բաժակ կենաց մա-
տռուակեցեր քոյոց սիրե-
լեացն։ Զթերին խակապէս
լցուցեր։ Զտարակոյսն փա-
րատեցեր։ Զտգիտութիւն
իմաստնացուցեր։ Զբարեա-
ցըն աւանդ կրկնեցեր։ Ըզ-
փափագ ըղձիցն արձանա-
ցուցեր։ Սպասողացն քում
ծանուցար։ Ամբարձելոց ձե-
ռացն աղերսիւ՝ արագ յայտ-
նեցար։ Պաղատանաց ձայ-
նից Հեծութե փոյթ ժա-
մանեցեր։ Զզօղեալսն եր-
կիւղիւ՝ խառնեալ խնդու-
թեամբ ընդ տիեզերս տա-
րածեցեր։ Վկայ Հաւաստի
լըմանն շնորՀի՝ խոստմանն
աւետեաց ելից միածնին՝
յաւազանին ջուր միացու-
ցեր։ Զշնորհիդ քո լոյս ե-
կեալ յերկնից օդով քաղց-
րութեան՝ ժառանգ անմա-
Հից կենաց յերկինս գրե-
ցեր։ Ահա՛ ընկալցիս զեր։
Բոլէից մաքրումն և ազա-
տարար։ Խնամակալ զօրեղ
բարեխօս և մխիթարար։
Առ քեզ պաղատիմք աստ-
ուած անսկիզբն, ստեղծիչ

շնչոց ։ Հոգի կերպաւոր ։ Անձն դիմաւոր՝ որդւոյ մերձաւոր, բնաւկից Թագաւոր, ընդ Հօր միաւոր ։ Որով լընուն 'ի տուր պարգեւի անաչառ բաշխմամբ՝ բարձունք և ստորինք ։ Ընկալցիս զքո ընտրեալսն և զօրացուցես 'ի հանդէս քում պատուիրանիդ ։ Զքահանայապետն մեր գիտողութեան՝ քոյինակրօն պատուոյդ սրբութեան ։ Զայցելուն դատման ընտրութեան՝ որ ընդ քեզն է կցորդութի ։ Զպէտս մարմնից կրթութեան՝ որ ընդ քեզն է դաւանութիւն ։ Զբազմամասնեայ գումարս դասուց յանուն քո ժողովելոցս ։ Զբարեպաշտ թագաւորն մեր՝ իւրովք զաւակօք ։ Զինաւորօք և զօրապետօք , աստուածութեանդ քոյ պաշտօնէիւք ։ Ձիականօք և հետեւակօք ։ Ոստիկանօք և քաղաքայնօք ։ Ուխտաւորօք և նուիրօղօք ։ Ապաձեռնօք և ամենայն մարդկան հասակօք ։ Որ հովուես և բարձրացուցանես՝ ամենառատ տէր լիապարգեւ 'ի պէտս կարեաց փրկութեան քումդ աղաչողաց ։ Ահա՛ ընկալ ։ Ի քեզ նկատեալ հայի բա՛րեգործ՝ ամենայն ակն տեսողի ։ Ապաւէն յուսոյ փրկութեան՝ կենաց առաջնորդ 'ի լոյսն վերին ։ Գրգիչ կենդանեաց, հանգիստ մեռելոց ։ Խնամող ուղեկից ամենավստահ ։ Տեղի բերկրութեան և վայր ցնծութեան ։ Անպարագրելի ունող համայնից ։ Վերանորոգեալ դասակարգեսցես ըզհրաժարեալսն 'ի քեզ հաւատով հանդիսի՝ բարեբանական գթութեամբ որհնեալդ 'ի բարձունս ։ Ահա՛ յիշեսցես եւ ողորմեսցիս ննջեցելոցն յուսով յարութեան, խնդրեմք ։

Եւ եւս առաւել զյորդորումն սիրոյ և զգործս ։ Բունել զմարմինս մեր 'ի մի շաւիղ ընտրութեան շնչոյ սիրոյն որ առ մեր, խնդրեմք ։ Գերազանց կոչումն և ձայն կենդանի ։ Ահաւոր մեծ անուն հզօր ։ Հոգի հեզութեան մարդասիրութեան գթութեան և ողորմութեան ։ Բարեխօսութեամբ կուսի խնկահոտ մօրն կենդա-

նեաց՝ հանդերձելոյդ 'ի քէն
տիրամօրն եւ ածածնի։
Մաղթողական աղերսար-
կութեամբ մեծին 'ի ծը-
նունդս կանանց մկրտու-
թեանն կարապետի, և հա-
մագոյակցիդ քո ձեռնադ-
րողի։ Խնկանուէր հայցմամբ
երջանկացն՝ առաքելոցն և
մարգարէիցն։ Մարտիրոսա-
կան հանդիսիւ սրբոյն ըս-
տեփաննոսի. որ և նախա-
զօրացան վկայք։ Մեծաւաս-
տակ առաքինութ̃ դաւա-
նողին զքեզ սրբոյն գրիգո-
րի և ամենեցուն մեր լու-
սաւորչի։ Մաքրակրօնից ա-
զանց միանձանց եւ զքեզ
աստուած խոստովանողաց։
Որ 'ի վերջնումն աւուր մե-
ծի՝ յայտնիս նորոգել միայն
ողորմած զ'ի քեզ գոյա-
ցեալքս։ Եւ այժմ ողոր-
մեա՛ց մեզ տէր աստուած
մեր՝ ըստ մեծի ողոր։

# ՔԱՐՈԶ

## Ի ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ

Գանձ բաղձալի բարութե̃
մեծին՝ գտեալ և ծածկեալ։
Լրութիւն անթերի՝ բե-
րող համայնից. և դու ինքն
'ի բնաւս։ Զոր ոչ իսկ տա-
նէր երկինն վերին՝ անվայր
քո խորան՝ եթերն անմա-
տոյց։ Անջրպետ ընդ քեզ
զարմից հրանիւթից ցու-
ցար սահմանեալ։ Նշանակ
պատկեր գթութեանց խը-
նամոց։ Ի յաթոռ փառաց,
թագաւոր բարձանց, 'ի վեր
քան զբան։ Ահա՛ ընկալցիս
զաղերս աղօթից՝ յարմա-
րեալ խնկօք յայս յարկ նը-
ւիրեալ սուրբ եկեղեցի,
աղաչեմք։
Բախձան պերճալի, կոչու-
մըն ընտանի, ձայն ախոր-
ժելի, անպարագրելի։ Որ
'ի թեւս թեթեւս հողմա-
յին օդոյ ամենավստահ
կառավարութեամբ բաղ-
մեալ տիրապէս, արկեր քեզ
դահոյս յառակս խորհրդոյ
աւետեաց ելիցն ըման. ա-
ծողդ 'ի յարմար զիրին կա-
տարումն. Նկատեալ զվայր

քոյին բնակութեանդ։ Յաւէտ անջրպետ, եւ յոգիս մեր միշտ։ Զօրին անձոռ, և զայլն պատուանդան։ Տեղի լուսատուր ազանց բոլորից։

Ըհա՛մ ընկալցիս զա։

Իմաստագործ անսխալատեղծ պատշաճակերտ կազմիչ համայնից։ Որ յսկզբնաձեռն յառաջակաւոյց զայս կերպարան հրաշազարդ իրի համեցար լինել։ Նախ զբնակն՝ ապա զբազմեալն։ Զգեցեր զերկին՝ և անդ զերկնայինսն։ Հաստատեցեր զադին՝ և զկնի զադամ։ Զ. յօդուած տապանին՝ և ՚ի նմա զապրեալն։ Տաղաւար նախնոյ հիւրընկալութեանն աբրահամու։ Օծեալ արձան և տուն աստուծոյ։ Սանդուղք մեր ելից և հետք իջման։ Ահարոնեան վրան պաշտաման։ Կտակ մատենի՝ դատից խօսողաց՝ բարձր դարիզին ընտրութեան։ Մեծին սողոմոնի տաճար լուսակիր, լեառըն տեառն և տուն աստուծոյ։ Ամբարձեալ նշան յազգս հեռաւորս, փողով ձայնարկու կոչման աշխարհի, ըստ տեսանողացն զանճառ քո խորհուրդ։ Ըհա՛մ ընկալցիս զա։

Գեղապաճոյճ աշտարակ կանգնեալ երկաթեղէն, սիւն անկործանելի և պատուար ամուր եղեալ պղնձի։ Ոսկեձոյլ աշտանակ լուսոյ։ Կղզի պարփակեալ ալեօք ամրութեան ըստ երկրորդ տեսութեանն եզեկիէլի։ Նոր հրաւիրմամբ եկեալ ՚ի ծուրայ։ Ի խնդիր իմաստից դիմեալ ՚ի սաբայ։ Յօտարասերմ ազանց քանանու։ Յօժարընթաց ՚ի բաբելոնէ։ Խօցեալ ոգի սիրով փեսային։ Դուռն հիւսեալ մայրատախտակօք։ Քարինք բիւրեղք ընդ կարկեհանայ։ Պաղպաջունք արփիանկարք՝ մահարձանօք արծաթեղինօք։ Քաղաք կենդանի շինեալ աստուծոյ։ Հոգւոյ ողջեցմամբն խօսեալ յիսուսի։ Լեառն պարարտ՝ մածեալ սրբութք։

Ըհա՛մ ընկալցիս զա։

Ուրախ լեր դշխոյ հարսն պանծալի, պսակաւոր մեծ զարմանուհի։ Բազմազաւակ կուսութեամբ բերկրեալ։ Որ ՚ի սկզբան անդ գծագրեցար։ Եւ աստ ՚ի նորում

հանդերձեցար՝ ոսկեհաճայլ չքնաղ գոյութեամբ ։ Յեղանակս կոչմանն հագարու, փոխեալ աղախնոյն 'ի տիկնայէ 'ի Սաղիմ ։ Եկեալ ինքնին անդրանիկն հօր՝ առնուլ զքեզ կցորդ ընդ լքեցելոյ աղինն յախոյլեայ։ Արկեալ քեզ հիմունս պաշտելիս՝ զառաքելոցն գումարութիւնս։ Աստեղանիշ լուսաւորութեամբ՝ բոցաճաճանչ շքով պաճուճեալ ։ Յարգանդ մաքուր և 'ի ծընունդս անախտս, երկնեալ անդստին ժառանգս աստուծոյ ։ Որ է օրինակ առձեռն յուսոյ ամենակալութեան՝ զխաղաղութի գըտեալ խնկաւէս ։ Ահա ընկալցիս զա ։

Բաբունն լուսոյ հզօր թագաւոր փեսայն երկնաւոր։ Ընծաս խորհրդով 'ի հանդէս խնձոյից պարու՝ կարգեաց քեզ կանոնս անխախտելիս ։ Բազմամասնեայ օրինակ կերպից 'ի նոյն տեսութիւն բոլոր էութեան, 'ի կերպարանս բիւրատեսակս առ 'ի չինուած կաթուղիկէի ։ Հաստիկ տոհմից զանազանութեան 'ի մի ժողովեալ հնազանդութե ։ Տուն և տեղի և յարկ ծածկութի ։ Ճարագ տօթոյ՝ վէմ օգնականի ։ Մարմնագոյից հողխաձիր ։ Զասաուած ընդ մարդկան բնակեցուցիչ ։ Համանունակ աղանց կուսերոց ։ Յոյս քաւութեան պարտաւորելոց։ Նախացուցակ համարձակելոց ։ Կատարելոց անձանց խմբարան ։ Ահա ընկալցիս զաղերս աղօ։

Իմաստութեանն հօր բնակութիւն՝ եօթնաստեղեան սեամբք կառուցեալ ։ Յորում օրհնեալն պատարագի 'ի տպանդ կամաց ճաշակման երկնաւոր հացին՝ 'ի զահաւորակ սրբոյ սեղանոյն ։ Կենաց մանանայն և գառն երկնաւոր ։ որ բաշնայ զմեզս կենդանեաց ենձեցելոց ։ Նոյն ինքն ամենայն և յամենայնի՝ զենումըն մեծ քան զհաբելին ։ Ուր զգրուեալն տնօրինէ յանըռնաջաս եկաւորութիւնն ։ Ի գիրկս տեանց սիրով քաղցրութեամբ կոչէ ձեռամբ յամրոցն անմատոյց, փախուցելոցն պատսպարան ։ Ի վերնայարկ

սրահն հոգեկիր՝ ուր զա-
շակերտսն զարմանագրեաց։
Յորում եղիցին կարգեալք
զօրութեամբ գահերիցու-
թիւնք վերադիտողաց . ՚ի
պատիւ աւուրս քո ուրա-
խացեալք՝ ուխտք անկեան
անբծացն պարու ։ Զհայ-
րապետն մեր՝ եպիսկոպոսօք՝
քահանայիւք և սարկաւա-
գօք։ Զվարդապետս, դպրօք
և հոգիապայծառ վարժա-
պետական շնորհիւ ։ Զթա-
գաւորն մեր՝ իւրովք զա-
ւակօք։ Եւ որք ընդ նովաւ
են իշխանութիւնք պե-
տութիւնք և զինուորու-
թիւնք՝ հարազատ սիրով
օրհնեալ յամենից ։ Ընձ
յիշեսցես եւ ողորմեսցիս
հոգւոցն հանգուցելոց յու-
սով յարութեն՝ խնդրեմք։
Եւ ես առաւել զյորդո-
րումն սիրոյ և ։

Բատել վերատին զմերժեալ-
սըն առ ՚ի քէն՝ միջնորդու-
թեամբ բաղմելոցն ՚ի քեզ՝
աղաչեմք ։

Գտեալ այն պատուական
մարգարիտ՝ անձառ ներ-
գործութեամբ՝ յաշխարհիս
ծովու, մարիամ սուրբ աս-
տուածածին ։ Դուստր լու-
սոյ և մայր սիոնի ։ Ընծե-
ռագործ հրաման հաւատոյ
ճշմարիտ պատկեր։ Որոյ այսր
օրինակի անուամբ օծեալ
կնքեցար։ Հարսնարան միոյ
բանիդ մարմնացելոյդ ՚ի քէն
աստուծոյ ։ Բարեխօս ընդ
քեզ ընկալցիս առ ՚ի հաշ-
տութիւն պարտաւորելոցս՝
զշառաւիղն անմահից կե-
նաց զկարապետն կոչման
սրբոց, և զպսակն մարտի-
րոսաց, առաքելովք և մար-
գարէիւք ։ Եւ որ մերն է
լուսաւորիչ՝ հանդերձ մի-
անձամբք ճգնաւորօք . որք
են ժառանգ աստուծոյ՝ ծը-
նեալք յորդեգրութիւն մե
աւազանաւն՝ անանջրպետ
հոգէտոհմութեամբ ։ Յո-
րում կրկին հայցեսցես նո-
րոգել զփոքրն ՚ի մեծ լայ-
նութիւն փառացդ՝ անպա-
րունակ բացարձակութբ,
զմայրն մարուր զաւակօք
հանդերձ, ուխտիւք պսա-
կելովք յայնմ առագաստի
յաւուր ահաւոր երևման
մեծիդ աստուծոյ։ Եւ այժմ
ողորմեաց մեզ ։

# ՔԱՐՈԶ.

## Ի ՍՈՒՐԲ ԽԱՉՆ ԱՍՏՈՒԱԾԸՆԿԱԼ

Գանձ անքննին. ծածկեալ մեծութիւն. զօրեղ ահաւոր՝ միշտ բարի: Երեքսրբեան անսահմանելի՝ օրհնանուն կենդանի: Անճառախոկութիւն՝ փակեալ 'ի զգալեացս: Համագոյ անթարգմանելի: Անհասանելի հեռաւոր, և անընդմիջելի մերձաւոր՝ անմահ Թագաւոր: Ահա խնկեսցին մաղթանք մեր առաջի քո ամենակալ, աղաչեմք:

Ոչէից. համայնից էից 'ի կուսից քառից՝ 'ի մի եղելութիւն զերկիր հաստատեցեր: Խորհուրդ կրկին ձեռնարկ վերստին. ընդդիմակ միջոց միջնորդաց երկուց՝ եղծման և նորոգութեան տեսութեն կենացդ փայտի: Ահա խնկեմ:

'Ի բարձունս անբաւս՝ անհետազօտելի գովեստիւ տօնեալ՝ ահեղ անմատոյց: Յանհանդչելի նուագ. ներբողից ազգաց հրանիւթից՝ պանծալի երգով պսակեալ աստուած բոլորից: Ի սահմանս երկրակշռութեանց երկնից, 'ի թևս չորից արփիակերպից՝ բազմօք կարգեցեր քեզ պատիւս անպատումս: Ի դրախտն ադինայ 'ի տնկոյն պարտեալ՝ ազդեալ ձայնեցեր 'ի ծառն օրհնութեան:

Ահա խնկեմ:

Գուշակ գարնայնոյ 'ի թռիչս ամբարձման՝ յօրինակ երկնի կամաց գթածիդ, 'ի լաստն ամրացո նոյեան տապանիդ: Պատկեր փրկութեան, կերպարան հրաշից, ապաստան յուսոյ, գեր 'ի վերնայինան զնոր ժողովուրդս ուխտիւ միջնորդեալ 'ի թևս խաչիդ՝ առ քեզ մատուցես: Ահա խնկեմ:

Ո՛վ գիր մատենի մատինդ աստուծոյ, կենսունակ տախտակ անխորտակելի, և աւանդ նորոյ օրինի սրբամանութեանց անեղծանելի: Լրումն ցուցմանց կանխապատմութեանց աւետեաց ըղձից: Ի բիւրուց հիւթից մեզ 'ի յօգնութի սոյն խնկ ծանուցար: Տիպ պաշտելի, գրաւ աշխարհի, շաւիղ անհետազօտելի, արեամբ արարչին նկարեալ 'ի փառս լուսոյ: Ահա խնկ

կեսցին դարձեալ խնդրը֊
ուածք մեր՝ առաջի քո ա֊
մենակալ, աղաչեմք։
Թաքունեայն պետ և ձիր
իմաստից տէր յիսուս քր֊
իստոս. միայն ուսուցիչ
զանիմանալիսն. որ ոչ գը֊
ծագրի յայսմ յաւիտենի։
Պատկեր հօր անհաս 'ի վեր
քան զբան։ Ուղղեալ յայս
նշան՝ հաստատեա՛ սովին
պնդութեամբ զսիւնս աշ֊
խարհի։ Պահեալ ամրու֊
թեամբ ըստ քում իրա֊
ւանց՝ զհովուապետն խա֊
չանց քոց բանաւոր հօտի։
Զեպիսկոպոսունս՝ երիցամբք
և սարկաւագօք։ Զվարդա֊
պետս՝ դպրօք և բնաւին
իսկ պաշտօնէիւք եկեղե֊
ցականօք։ Զթագաւորն
մեր՝ իւրովք ծննդօք. համ֊
դերձ պետական նահանգօք
հնազանդեցելովք։ Արա֊
ցես լինիլ երկիւղածութե
սրտի՝ խաչիդ պարծանաց 'ի
քեզ զօրացեալ։ Ահա՛ խըն֊
կեսցին դարձ։
Ի քեզ համբառնամք զձե֊
ռըս զմիտս և զզգայութիւ
հոգւոց իմաստից։ Արձա֊
նացուսցես զմեզ անշարժ
պնդութեամբ ընդ հովա֊
նեաւ թևոց սուրբ խաչիդ։
Զարքայութիւնն յաղթող։
Զդատողութիւնն անպա֊
տիժս։ Զիշխանականսն հան֊
դարտս։ Զզինուորութիւն
խրատեալս։ Զհավարժիցն
տուր սանձս։ Աշխականացն
անբծութիւն։ Հետեւա֊
կացն խրախոյս։ Քաղաքայ֊
նոցն պատուէր։ Նուիրո֊
ղացն լրութիւն։ Ուխտա֊
ւորացն սփոփանս։ Ննջե֊
ցելոցն հանգիստ։ Եւ հա֊
մօրէն ժողովրդեանն քում
սովիմք ամրութի, պաշտ֊
պանութիւն, քաւութի,
առողջութիւն և ողորմու֊
թի օրհնեալ յաւիտեան։
Ահա՛ յիշեսցես և ողորմես֊
ցիս ննջեցելոցն յուսով յա֊
րութեան, հայցեմք։
Եւ ևս առաւել զյորդո֊
րումն սիրոյ և։
Թոտել զմարմինս մեր 'ի մի
շաւիղ ընտրութեան հո֊
գւոյ սիրոյն որ առ տէր,
խնկեսցին։
Գոհաբանութիւն խնամոց՝
խնդրողին զխաղաղութիւն
միշտ յերկըրպագուացս։
Պաշտպանութեամբ ծնողի
փրկչին և մարմնարանի ան֊
պարագրելի սրբոյն՝ մարխա֊

մու աստուածածնի և միշտ կուսի։ Աղերսիւ և աղաչանօք Մկրտչին ջուրքք՝ զհոգին հրաւիրողի կարապետին մեծին յովհաննու։ Պաղատանօք թագաւորելոցն օծութեամբ հոգւոյն առաքելոցն սրբազգեստից։ Նահատակութեամբ նախկին վկային սրբոյն ստեփաննոսի՝ որ է որդի անդրանիկ փրկագործ կրից երկրորդն ադամայ։ Արդահատութբ և աղօթիւք արի երջանկաց մարտիրոսացն կատարելոց։ Խոստովանողական դաւանութեամբ սրբոյն գրիգորի հայաստանեայցս լուսաւորչի և յանմերձենալիան նուիրողի։ Ամենապաշտօն բազկատարածութբ մաքուր միանձանց։ Եւ ամենայն ընտրելոց պսակելոցն ընդ քեզ խաչակիր վարուք յաւուրն մեծի։ Եւ այժմ ողորմեա՛ց մեզ տէր աստուած մեր՝ ըստ մեծի ողոր։

